Ավելի լավ է դատախազությունը մտածի այն մասին, որ կալանքի որոշումներն այնքան շատ են, որ ՔԿՀ-ներում տեղ չկա, հրաժարվում են ընդունել նոր կալանավորների: Արդյունքում՝ Երեւանի բնակիչներին, որոնց դատն այստեղ է, տանում, հասցնում են Վանաձոր, կան դեպքեր, երբ 2 օրը մեկ հարցաքննությունների են բերում Երեւան:

Կարդացեք՝ էջ 4

Անկեղծ ասած՝ Նիկոլ Փաշինյանի քայլերը հոգեկան խնդիրներ ունեցող մարդու գործողություններ են հիշեցնում: Նրա արարքները պետք է զննության ենթարկեն հոգեբույժները, հոգեբաններն անզոր են: Ես կարող եմ ասել մի բան, որ Փաշինյանի գործողությունները հասարակության վրա առաջվա համեմատ շատ քիչ ազդեցություն են թողնում:

Կարդացեք՝ էջ 5

Բաքվի շքերթին մեծ թվով հյուրեր մասնակցեցին, սակայն Ադրբեջանը ծանր է տարել ոմանց բացակայությունը եւ սկսել է «ներկա-բացակա» անել, թե ովքեր եւ ինչու չայցելեցին Բաքու՝ զորահանդեսին մասնակցելու: Իշխանամերձ կայք Minval Politika-ն պարզել է, որ շքերթի ժամանակ տրիբունաներում եղել է 75 երկրի ներկայացուցիչ:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 180 (4082), 12 նոյեմբեր, չորեքշաբթի, 2025

www.hraparak.am

Փաշինյանը շատ դժգոհ է մնացել Նարեկ Կարապետյանի՝ Թաքեր Կարլսոնին տված հարցազրույցի հետեւանքներից: Հիշեցնենք. երեկ տեղեկացանք, որ Թրամփ կրտսերը չեղարկել է նոյեմբերի 12-ին Հայաստան այցը, եւ չի բացառվում, որ այդ հարցազրույցն է դեր խաղացել՝ Եկեղեցու դեմ հետապնդումների մասին տեղեկությունները նրան հետ են պահել Հայաստան այցելելու մտքից: Փաշինյանը կարծում է, որ այդ հարցազրույցից հետո իր մասին բացասական տպավորություն է ստեղծվել ԱՄՆ-ում, ուստի Նազելի Բաղդասարյանին եւ Արարատ Միրզոյանին հանձնարարել է ռեւանշ-հարցազրույց կազմակերպել հայտնի Time ամսագրի հայտնի լրագրող Սայմոն Շուստերի հետ: Նա ուզում է միջազգային հանրությանը համոզել, որ ընդդիմության դեմ իր պայքարը լեգիտիմ է, եւ որոշել է ամերիկյան հարթակում փաստեր ներկայացնել, թե ինչպես էին ընդդիմությունն ու Եկեղեցու ներկայացուցիչներն այս ամռանը փորձում զավթել իշխանությունը՝ ուժի կիրառմամբ: Ավելին, նա հույս ունի հայտնվել ամերիկյան Time ամսագրի վարկածով «Տարվա մարդ» կոչման հավակնորդների ցուցակում: Կարծում է, որ դա կբարձրացնի իր վարկանիշը հայ հանրության աչքում: Նա ասել է՝ ֆինանսական ծախսերից չվախենան՝ կազմակերպեն հարցազրույցը: Սայմոն Շուստերն անցյալում հարցազրույցներ է արել Նավալնիի, Զելենսկու, անգամ Լուկաշենկոյի հետ:

«Քաղաքացիական պայմանագրում» նախընտրական աժիոտաժին մինչ այս պահն անհաղորդ են իշխանական ֆրակցիայի անկուսակցական պատգամավորները: Երեկվա դրությամբ պատգամավորության թեկնածության համար այս շրջանակից դեռ առաջադրումներ չէին եղել: Մեզ ասացին, որ Անդրանիկ Քոչարյանը, այդուհանդերձ, մոտ օրերս կառաջադրվի, փոխարենը պատգամավոր աշխատելու հավեսը կորցրել է Գագիկ Մելքոնյանը: Խաչատուր Սուքիասյանի մասով էլ ասում են՝ դեռ չի կողմնորոշվել, հավանաբար սպասում է վերեւների տրամադրվածությունը շոշափելուն: Հիշեցնենք, որ անկուսակցականները, ՔՊ ցուցակում ընդգրկվելու համար, պետք է վարչության որեւէ անդամի երաշխավորություն ունենան եւ, ի տարբերություն ՔՊ անդամների, գրանցվելու դեպքում 500 հազարի փոխարեն 1.5 միլիոն դրամ վճարեն ՔՊ բյուջե:

Մի լուր անտեսեցինք

Երեկ ցորենի թեման թեժ քննարկվում էր՝ մարդիկ անհանգիստ էին: Մինչ այս անհանգիստ էին, քանի որ Ադրբեջանի տարածքով Հայաստան եկող ցանկացած սննդատեսակի նկատմամբ կա բնական թերահավատություն: Իսկ երեկվանից անհանգիստ էին, քանի որ պարզվեց՝ ցորենը, որպես սննդամթերք, մտահոգիչ է՝ այս տարվա ղազախական ցորենը 3-րդ ու 4-րդ տեսակի է, իսկ Հայաստան ներմուծվողը 4-րդ տեսակի է, այսինքն՝ պիտանի չէ սննդի մեջ օգտագործելու համար: Այն լավագույն դեպքում կարող է որպես անասնակեր օգտագործվել: Ավելին՝ բաց աղբյուրներից էլ տեղեկացանք, որ հասկի մեջ ծլարձակելու արդյունքում այս տարվա ղազախական ցորենը վարակված է ալֆա եւ միկոտոքսիններով, որոնք վտանգավոր թույներ են: Այնքան վտանգավոր, որ երբեմն քիմիական զենքի մեջ են օգտագործվում եւ կարող են անգամ մարդու մահվան պատճառ դառնալ: Իսկ այս փնթի պետական կառավարման, ստի ու խաբեության ժամանակներում ոչ ոք չի կարող երաշխավորել, որ այդ ցորենը չեն աղալու ալրաղացներում, չեն օգտագործելու հացի եւ հացամթերքների արտադրության մեջ, եւ մենք լրացուցիչ ռիսկերի չենք ենթարկվելու՝ հիմա էլ պարենային անվտանգության տեսանկյունից: Եվ մինչ մարդիկ բուռն քննարկումների մեջ էին ցորենի կապակցությամբ, մի կարեւոր իրադարձություն երեկ վրիպեց հանրության աչքից: Երեկ ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները հերթով իրենց մոտ ընդունեցին Եվրամիության երկրների՝ Հայաստանում հավատարմագրված դիվանագետներին: Նախ նրանք հյուրընկալվեցին խորհրդարանում՝ ԱԺ նախագահի, ապա՝ ԱԺ փոխնախագահի մոտ: Հետո հանդիպեցին Նիկոլ Փաշինյանի հետ եւ վերջում՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի: Եթե սրան հավելենք նաեւ այն, որ նախօրեին Փաշինյանը հանդիպել էր զինվորականների հետ, կարող ենք եզրակացնել, որ ինչ-որ բան են հանրությունից թաքցնում:

Երեկ ռեկորդային ժամկետում՝ քառորդ օրում, ՔՊ-ն սպառեց ԱԺ քառօրյա նիստերի օրակարգը եւ մեծ ընդմիջումից հետո մի քանի ժամանոց հանգստի գնաց՝ վերադառնալով միայն հայտարարությունների ժամին: Մեզ ասացին, որ հատուկ են թեթեւ օրակարգ ընտրել՝ «մեծ մարտից» առաջ: Բանն այն է, որ այսօր առավոտվանից սկսվելու է 2026 թվականի բյուջեի նախագծի քննարկումը, մեկնարկը տալու է Նիկոլ Փաշինյանը, բայց քանի որ այն նախընտրական տարվա բյուջե է, եւ նախորդ օրերին էլ ՀՀ նախկին նախագահներն իրենց հարցազրույցներով լավ «ցավեցրել» են Փաշինյանին, թիմը որոշել է գլխավոր ֆինանսական փաստաթղթի քննարկումը վերածել նախկինների ոսկորներն աղալու գործընթացի՝ նորից հիշելով՝ էլ գող փիսո, էլ քաչալ շուն:

ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ Ի՞ՆՉ ՈՒՆԵՆ ԽՈՍԵԼՈՒ

Օրենսդիր եւ գործադիր իշխանության ներկայացուցիչները երեկ հերթով ընդունել են ՀՀ-ում ԵՄ անդամ երկրների դեսպաններին: Ուշագրավ է, որ ԱԺ խոսնակ Ալեն Սիմոնյանն առանձին է ընդունել, փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը՝ առանձին: Սիմոնյանի հանդիպման հաղորդագրությունում ասված է. «Հանգամանալից քննարկում է ծավալվել ՀՀ-ԵՄ գործընկերությանը եւ խորհրդարանական հարաբերությունների խորացմանն առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ: Քննարկումների առանցքում են եղել ինչպես Հայաստանում ընթացող ժողովրդավարական բարեփոխումները, այնպես էլ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղության գործընթացն ու տարածաշրջանային զարգացումները»: Սիմոնյանը դեսպանների ուշադրությունն է հրավիրել նաեւ «Ադրբեջանում գտնվող գերիների, ապօրինի պահվող եւ անհետ կորած համարվող անձանց խնդրին», իսկ Ռուբեն Ռուբինյանի ռելիզում գրված է. «ԵՄ անդամ երկրների ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ դեսպանների հետ քննարկվել են Հայաստան-ԵՄ ընդլայնվող համագործակցությանն առնչվող հարցեր: Հյուրերի խնդրանքով Ռ. Ռուբինյանն անդրադարձել է տարածաշրջանային զարգացումներին, ներկայացրել Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացի ընթացքը»: «Տպավորություն է, որ Դուք եւ Ալեն Սիմոնյանը խռով եք իրարից՝ ինչո՞ւ եք նույն մարդկանց հետ նույն օրը առանձին-առանձին հանդիպում»,- հարցրինք Ռուբինյանին: «Բայց մենք տարբեր ձեւով ենք հանդիպում, չէ՞, Ալեն Սիմոնյանը՝ որպես ԱԺ նախագահ, ես՝ որպես փոխնախագահ կամ ՀՀ-Թուրքիա բանագնաց: Կամ, օրինակ, Սարգիս Խանդանյանը որպես Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ, այնպես որ, չստացվեց...»,- ասաց նա: Նույն օրը դեսպանների նույն կազմը նաեւ Նիկոլ Փաշինյանի հետ է հանդիպել:

ՊԱՏԻԺՆ ԱՌԱՎՈՐ Է ԼԻՆԵԼՈՒ, ԻՐԵՆՔ ՉԵՆ ԷԼ ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ, ԹԵ ԻՆՉԻ ՀԵՏ ԳՈՐԾ ՈՒՆԵՆ

*«Հրապարակի» զրուցակիցը Գուգարաց թեմի առաջնորդ **Հովնան եպիսկոպոս Հակոբյանն** է:*

- Նախկին հոգեւորական Տեր Տարոնը կարգալույծ հռչակվեց, Տեր Թադեն դեռեւս կարգալույծ չի արվել: Նիկոլ Փաշինյանը հաջորդ կիրակի էլ գնում է Խաչիկ գյուղի եկեղեցի: Մարդկանց մասնակցությունը, նույնիսկ վարչական լծակի կիրառման պարագայում, խիստ նվազ է: Հնարավո՞ր է, որ Փաշինյանի համառությունը հանգեցնի իր համար ցանկալի արդյունքին:

- Չեմ կարծում: Այդքան շատ համախոհներ չի կարող ինքն ունենալ:

- Չունի, բայց փաստացի Հովհաննավանքն այսօր «օկուպացված» է:

- Ինքը ցանկացած եկեղեցում էլ կարող է գնալ, մասնակցել պատարագի, բայց դա չի նշանակում, որ իր կործանարար ընթացքն էլ, գործողությունն էլ կհաջողեն:

- Հովհաննավանքն «օկուպացրել» են, Թալինի եկեղեցի գնացին, հիմա էլ՝ Խաչիկ գյուղի եկեղեցի:

- Առիթ է, թող գնա եկեղեցի՝ մի քիչ մաքրվի:

- Եթե այսպես հերթով բոլոր եկեղեցիները գնան, «օկուպացնեն»...

- Գիտեք, թե խնդիրն ինչն է՝ մարդուն չես կարող արգելել եկեղեցի գնալ, եթե ցանկանում է եկեղեցի գնալ, թող գնա:

- Սրբազան, բայց միայն չեն գնում, եկեղեցու դռների կողպեքն են նույնիսկ փոխում:

- Օհանավանքն են միայն արել, Թալինի եկեղեցունը չեն փոխել, եւ երկրորդը՝ պետական ապարատի դեմ ի՞նչ կարելի է անել, Դուք հուշեք:

- Հասարակության մի ստվար զանգված ասում է՝ ինչո՞ւ եկեղեցին չի բանադրում:

- Ինձ թվում է՝ կգա ժամանակը, եւ դա էլ կլինի: Հարցն այն է, որ բանադրանքն էլ իրեն չի օգնի. մարդը չի ընդունում, բանադրանքն ազդում է այն մարդու վրա, որը մի քիչ հավատ ունի, զգացողություն ունի, հավատ ունի առ Աստված: Այս մարդիկ չունեն, ինչ ուզում ես, արա: Խնդրեմ, իրենց պատարագների մասնակիցներին նայեք՝ ովքեր են: Դա կապ ունի՞ եկեղեցու վերանորոգման հետ: Դե հիմա պատկերացրեք, եթե ասում ես, որ այս մարդուն բանադրում ես, ի՞նչ օգուտ: Նրանք մի բան հաշվի չեն առել, որ իրենք գործ ունեն Սուրբ Հոգու հետ: Այսօր Սուրբ Հոգուն դեմ են գնում, եւ պատիժը շատ մեծ է լինելու իրենց: Աստվածաշնչում ասվում է՝ վայ այն մարդուն, որը կհայհոյի Սուրբ Հոգուն, իսկ գիտակցաբար գնալ մի բանի՝ դա նշանակում է հայհոյություն Սուրբ Հոգուն, առավել եւս՝ Եկեղեցու եւ եկեղեցական կյանքը տրոհելու, անջատում մտցնելու համար: Իրենց պատիժն ահավոր է լինելու, իրենք չեն էլ պատկերացնում, թե ինչի հետ գործ ունեն:

- Մամուլը գրում է, որ այս իշխանության հաջորդ թիրախը, որին հավանական է, որ կալանավորեն, կարող եք լինել Դուք եւ Սյունյաց թեմի առաջնորդը:

- Մեծ լավություն արած կլինեն:

- Ի՞նչ իմաստով:

- Կհերոսացնեն (ծիծաղում է):

- Չե՞ք մտահոգվում:

- Ինչի՞ մտահոգվեմ, թող իրենք մտահոգվեն:

- Դրանով թեմի աշխատանքը կտապալեն:

- Խնդիրը դա չէ, թեմը կարող է առանց ինձ էլ գործել: Իր խնդիրն այն է, իրենք մի բան չեն հասկանում, որ հոգեւորականին հնարավորություն են տալիս աղոթել՝ այ, դրանից թող վախենան: Իսկ այնտեղ ինչ պիտի անե՞ս՝ աղոթել միայն:

- Մտավախություն ունե՞ք, որ կարգալույծ հռչակված Ստեփան Ասատրյանի պես հոգեւորականներ կարող են էլի լինել:

- Անգամ եթե լինեն, Եկեղեցու համար մի տասը հոգեւորականի կարգալույծ լինելը թիվ չէ. նրանք ոչ մի բան էլ չեն կարողանալու անել:

- Իսկ եթե ավելի շատ լինեն, քան 10 հոգին...

- Ավելի լավ, Եկեղեցու մաքրման գործընթացն իրենք իրենց ձեռքով անում են: Իրենք չեն ասո՞ւմ, որ Եկեղեցու մաքրման գործընթաց են սկսել: Իրենք օգտակար են լինում, որ Եկեղեցու մաքրումը սկսվի: Իրենք բացահայտում են իրենք իրենց:

- Վստա՞հ եք, որ Փաշինյանի հակաեկեղեցական պայքարը տապալվելու է:

- Ոչ թե տապալվելու է, շատ կործանարար է լինելու իր ու իր համախոհների համար:

- Վեհափառի եղբորը կալանավորելուց հետո, սրբազաններին կալանավորելուց հետո շատերը կանխատեսում են, որ Փաշինյանը ծրագրում է Վեհափառին էլ ազատությունից զրկել:

- Եթե կարող է, թող անի:

- Իսկ ի՞նչը պիտի խանգարի իրենց դա անել՝ Մայր Աթոռ ուժայինների մտնելու փորձն արդեն կա:

- Թող դա էլ անի, եթե այն արել է, թող դա էլ անի: Խնդիրն անելը չէ՝ խնդիրը պատասխան տալն է ամեն ինչից հետո: Ամեն մեկն էլ կարող է մի բան անել, բայց վերջում պատասխան տալն է կարեւոր:

- Փաշինյանն իր նպատակին կհասնի՞ Վեհափառի հեռացման հարցում:

- Իհարկե՝ ոչ, բացառվում է:

- Վեհափառին լավ ճանաչելո՞վ եք դա ասում:

- Միանշանակ:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Գերուռճացված հաստիքացուցակ

Մարզպետարանները «բարեփոխվել» են՝ հիմա կոչվում են «Մարզպետի աշխատակազմեր»: Մարզպետների աշխատակազմերն անմիջական կերպով ընդամենը 2 ոլորտ են կառավարում՝ տվյալ մարզի պետական հանրակրթական դպրոցները եւ մարզի պետական, գյուղական բուժհիմնարկները: Սակայն այդ ոլորտների բովանդակային կառավարումն էլ է իրականացվում ԿԳՄՍ եւ առողջապահության նախարարությունների հետ համատեղ: Մարզպետների աշխատակազմերը գերուռճացված են: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել. «Նոյեմբերի 5-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմում քանի՞ հաստիք կա եւ քանի՞ թափուր հաստիք գոյություն ունի: 2025 թվականին այդ թափուր հաստիքները զբաղեցնելու համար հայտարարություններ տրվե՞լ են, որտե՞ղ են դրանք զետեղվել, դրանց արդյունքում ո՞ր պաշտոններն են համալրվել»: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Նոյեմբերի 5-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում առկա է 76 հաստիք, որից ինը՝ թափուր: Թափուր հաստիքները համալրելու համար հայտարարությունները հրապարակվում են ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնական կայքէջում: Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչության թափուր գլխավոր մասնագետի հաստիքը մրցույթի արդյունքում համալրվել է 2025 թվականի ապրիլի 23-ին, իսկ 2025 թվականի ապրիլի 28-ին մրցույթի արդյունքում համալրվել է մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման եւ իրականացման բաժնի ավագ մասնագետի հաստիքը»: Եթե նկատեցիք՝ 25 թ. ապրիլից մինչեւ նոյեմբերի 9-ը մյուս թափուր հաստիքները (7) չեն համալրվել, երեւի իրականում ավելորդ են, եւ համալրման կարիք չկա:

ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԸ, ՀԻՆ ՎԵՐԵԼԱԿՆԵՐՆ ՈՒ ՃՈԽ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ

Մայրաքաղաքը բազում խնդիրներ ունի, որոնք հրատապ լուծում են պահանջում, սակայն տարիներով չեն լուծվում: Քաղաքապետարանը Երեւանի բյուջեն շռայլորեն ծախսում է Երեւանի օրվա, Ամանորի եւ բազում այլ առիթներով, նաեւ մեծ գումարներ է ծախսում քաղաքապետարանի եւ ենթակա հիմնարկությունների աշխատողների պարգեւատրման համար: Պարզ չէ, թե քաղաքապետարանի պաշտոնյաները աշխատանքային ինչ նվաճումների համար են այդքան պարգեւատրվում, երբ երեւանցիներն ամեն օր տեսնում են նրանց աշխատանքը, իսկ ավելի հաճախ՝ անգործությունը: Հոկտեմբերի 1-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել քաղաքապետ Տիգրան Ավինյանին, որին պատասխանելու համար քաղաքապետարանը 30 օր է խնդրել: Հարցրել էի. «Հոկտեմբերի 1-ի դրությամբ այս տարի Երեւան քաղաքի բյուջեից ընդհանուր որքա՞ն պարգեւավճար են ստացել քաղաքապետարանի, քաղաքապետարանի ենթակայությամբ գործող հիմնարկությունների աշխատակիցները»:

Քաղաքապետարանից պատասխանել են. «Ի պատասխան Ձեր հարցման՝ Ֆինանսական վարչությունից տեղեկացնում են, որ Երեւանի քաղաքապետարանի եւ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ենթակա կազմակերպությունների աշխատակիցներին 01.10.2025թ. դրությամբ փաստացի վճարվել է 1 707 817,3 հազ. դրամի չափով պարգեւատրում»:

Այսինքն, 10 ամսվա դրությամբ մայրաքաղաքի բյուջեից 1 միլիարդ 707 միլիոն 817 հազար 300 դրամ պարգեւավճար են հատկացրել, այդ գումարը տարեվերջին աճելու է:

Իսկ ի՞նչ խնդիրներ կան Երեւանում: Օրինակ, շատ են վթարային շենքերը: Աստված չարասցե, որ մայրաքաղաքում երկրաշարժ լինի, այդ շենքերից քանի՞սը տարերային աղետին կդիմանա: Լուրջ խնդիր է բարոյապես եւ ֆիզիկապես մաշված վերելակների հարցը: Դրանք հաճախ խափանվում են, եւ բազմաբնակարան շենքերի վերին հարկերի բնակիչները՝ տարեցներ, հիվանդներ, չեն կարողանում իջնել, իսկ «լիֆտի մարդը» լավագույն դեպքում ժամեր անց է գալիս՝ նորոգում: Երեւանի քաղաքապետարանը շատ է գովազդում հին վերելակները նորերով փոխարինելու գործընթացը: Երեւանի քաղաքապետին հարցրել եմ նաեւ. «Երեւանում վթարային քանի՞ բազմաբնակարան շենք կա, դրանցից քանիսը վթարայնության ինչ աստիճան ունի: Երեւանի բազմաբնակարան շենքերի գործող քանի՞ հին, փոխարինման կարիք ունեցող վերելակ կա, 2025 թվականին բազմաբնակարան շենքերում քանի՞ հին վերելակ է փոխարինվել նորերով»: Քաղաքապետարանից հայտնել են. «Անշարժ գույքի կառավարման վարչությունից տեղեկացնում են, որ 4-րդ աստիճանի վթարային են համարվում Արցախի 4-րդ նրբ. հ. 10, Արցախի 4-րդ նրբ. հ. 10/1, Շիրակի հ. 60, Արզումանյան հ. 10, Արզումանյան հ. 17 (3-րդ մուտք), Կողբացու փողոց հ. 41, Արզումանյան հ. 12 (2-րդ մուտք), Արցախի 4-րդ նրբ. հ. 10 ուսումնարանի շենք (սպորտդահլիճի մասնաշենք), Արզումանյան հ. 8 ա, Վարդաշեն 6-րդ փող. հ. 68 ա, Վարդաշեն 6-րդ փող. հ. 66/1, Ֆուչիկի հ. 23, Մարգարյան 2-րդ նրբ. հ. 2 շենք, 3-րդ եւ 4-րդ մուտքեր եւ Արցախի փող. հ. 61/3 հասցեների շենքերը: Կոմունալ տնտեսության վարչությունից հայտնում են, որ Երեւանի բազմաբնակարան շենքերի հին վերելակները նորերով փոխարինելու ծրագիրը մեկնարկել է 2019 թվականին: 2019-2024 թվականների ընթացքում Երեւան քաղաքում փոխարինվել է 2 հազար 56 վերելակ, իսկ 2025 թ. ծրագրերով նախատեսվում է փոխարինել 504 վերելակ: Հոկտեմբերի 10-ի դրությամբ 504 վերելակից 390-ն արդեն իսկ տեղադրվել է, 20 հասցեներում աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ 94 վերելակ կապալառու կազմակերպության կողմից կմատակարարվի առաջիկայում: Տեղեկացնում ենք նաեւ, որ 2025 թ. ծրագրի իրականացումից հետո Երեւան քաղաքում դեռեւս կմնա փոխարինման ենթակա 1822 վերելակ»: Այսքան խնդիրներ, իսկ քաղաքապետարանի ու ենթակա հիմնարկների պաշտոնյաները Երեւանի բյուջեից ճոխ պարգեւատրվում են:

Նյութերը՝ Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

ՄԵՐ ԿԵՐԱԾ ԱՄԵՆ ԻՆՉԸ ՀԱՎԸ, ԽՈԶՆ ՈՒՏՈՒՄ ԵՆ, ՈՒՐԵՄՆ Ի՞ՆՉ՝ ՄԵՆՔ ԱՆԱՍՆԱԿԵ՞Ր ԵՆՔ ՈՒՏՈՒՄ

*Հարցազրույց ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, առողջապահության մշտական հանձնաժողովի նախագահ **Հռիփսիմե Հունանյանի** հետ*

- Մի քանի օր առաջ այցելել էիք Տավուշի սահմանամերձ գյուղեր: Ո՞րն էր նպատակը, ինչպիսի՞ ընդունելության արժանացաք:

- Այո, ֆրակցիայի ղեկավարի գլխավորությամբ մի խումբ պատգամավորներով եղանք Կիրանցում եւ սահմանամերձ այլ գյուղերում, մարզային այց էր՝ շփվելու, ծանոթանալու Կիրանցի նոր դպրոցի հետ, նոր աշխատանքների հետ ծանոթանալու: Նաեւ եղանք Դիլիջանում, որտեղ մեծ շինարարական աշխատանքներ էին տարվում, տեսանք գյուղացիներին, խոսեցինք իրենց հետ:

- Ինչպե՞ս ընդունեցին ձեզ բնակիչները, որոնք սահմանազատման հետեւանքով տուն, հող են կորցրել:

- Շատ լավ ընդունեցին: Փորձեցինք մեր աջակցությունը, օգնությունը հայտնել՝ իրենց խնդիրների հետ կապված, ասացին, որ խնդիրներ չունենք, մեր գյուղի միակ խնդիրն այն է, որ մեր երիտասարդները չեն ամուսնանում:

- Այսինքն՝ մարդիկ գոհ ու երջանի՞կ են, որ իրենց տները, հողերը կորցրել են, թշնամին մոտեցել է:

- Բոլոր այն մարդիկ, որոնք տներ ու հողատարածքներ են կորցրել, պետությունը նրանց փոխհատուցել է, տներով ապահովել, ես ոչ մի դժգոհություն չլսեցի այդ մարդկանցից, գոնե մեկ դժգոհություն: Եղանք Կիրանցի նորակառույց դպրոցում, որը շատ-շատ լավ դպրոց է:

- Խոսքը սահմանին կից դպրոցի՞ մասին է, իսկ այդ պատը որքանո՞վ է ապահով, բնակիչները հաշտվե՞լ են այդ իրողության հետ:

- Այո, այո, պատի հետ էլ են հաշտ, մենք տեսանք սովորական տարածքներ, ոչ մի ուժ, մարդ չկար այնտեղ, որը լարված տպավորություն կթողներ:

- Իսկ դուք շրջե՞լ եք փողոցներում, պատահական մարդկանց հետ զրուցե՞լ եք, որովհետեւ տեսանյութեր չկային, տեղացիներն էլ պատմել են, որ երբ Փաշինյանը գնում է Կիրանց, տեղացիներին իրավապահները թույլ չեն տալիս տներից դուրս գալ:

- Վարչապետը մեզ հետ չէր, մենք էլ ոչ մեկին չենք ասել՝ հանկարծ տներից դուրս չգաք, շատ պատահական ենք գնացել, մարդիկ իրենց տներից դուրս են եկել, շփվել մեզ հետ, վստահեցնում եմ՝ շատ լավ ընդունելության ենք արժանացել թե՛ Բերքաբերում, թե՛ մնացած տեղերում: Բերքաբերի ժողովուրդն ասում էր, որ գյուղն արթնացել է, սկսել է ապրել, ասացին, որ մեր երիտասարդներն էլ չեն գնում Ռուսաստան, անգամ հետ են վերադառնում, որ կառավարության տարբեր ծրագրերով՝ գյուղատնտեսական, սուբվենցիոն, սկսել են իրենց աշխատանքները եւ շատ գոհ են: Ասացին, որ 16 մլն-ի ծրագրով, որ սահմանամերձ գյուղերում տներ են կառուցվում, բազմաթիվ մարդիկ են ավելացել գյուղում, եկել են ապրելու, մի խոսքով՝ գյուղն արթնացել է:

- Սահմանազատումից հետո՞:

- Այո, գյուղն արթնացել է, եւ գյուղում ապրելու շունչ է արթնացել:

- Փաստորեն, իրենց տարածքները կորցրել են, բայց մեծ փողեր եք դուք ներդրել այդ տարածքներում, որ դժգոհ չլինեն:

- Այո, բայց իշխանությունը բոլոր սֆերաներում է գումարներ ներդնում, նամանավանդ՝ սահմանամերձ գյուղերում՝ դրանք բնակեցնելու, ենթակառուցվածքներ սարքելու, մշակութային կենտրոններ կառուցելու, զարգացնելու նպատակով, որ գյուղերը չդատարկվեն:

- Բա ադրբեջանցիների ներկայությո՞ւնը՝ մի քանի մետրի վրա:

- Եթե անկեղծ, ես ադրբեջանցիներ չեմ տեսել, չկար ոչ մի ադրբեջանցի, իրենք էլ ընդհանրապես այդ թեմայով չեն խոսել, ժողովրդի համար այդ թեման ոնց որ անցած թեմա լինի, իրենք ոչ մի լարվածություն, անհանգստություն չեն տեսնում, բնականոն կյանքով ապրում են:

- Լավ, հանրությունն անհանգիստ է, որ Ադրբեջանով Հայաստան հասնող ցորենը կարող են թունավորել, եւ պարզվեց, որ ղազախական ցորենը 4-րդ կարգի է, այսինքն՝ անասնակեր, նաեւ՝ վարակված, իսկ իշխանությունը սա ներկայացնում է որպես դարի ձեռքբերում, թե ապաշրջափակել ենք ճանապարհները, ի՞նչ է բերվում՝ որակը կարեւոր չէ՞:

- Ես, անկեղծ ասած, առաջին անգամ եմ լսում, որ 4-րդ կարգի ցորեն է, անասնակեր, առավել եւս՝ թունաքիմիկատներով վարակված, ես չեմ կարծում, որ մենք այնքան անխելք ենք, որ նման ցորեն կարող ենք բերել Հայաստան: Երբ որ մեր իշխանությունը եւ մեր վարչապետը բազմիցս են ասել, որ պետք է արտադրենք որակյալ սնունդ, որպեսզի դրանք ցանկալի լինեն նաեւ եվրոպական շուկաների համար:

- Հիմա փաստ է, որ չորրորդ կարգի ցորեն է: Էկոնոմիկայի փոխնախարարը հաստատեց, անգամ զարմացավ, թե ինչու ենք զարմանում, չէ՞ որ այդ ցորենը կովը կարող է ուտել ու կաթ տալ...

- Անասնակերի հետ կապված՝ միանշանակ չեմ հավատում, եւ գիտե՞ք՝ սեւ հացն այսօր ամենաթանկ, ամենաօգտակար հացն է, բայց այն պատրաստվում է գարու վատ սորտից: Ես չգիտեմ, թե չորրորդ կարգի ցորենն իր օգտակարությամբ ինչ բաղադրիչներ ունի, կարող է ավելի լավն է, քան առաջին կարգի ցորենը, գուցե խոհանոցում խմորեղեն թխելուց առաջին կարգի ցորենի ալյուրն է լավը, բայց, օրինակ, հաց թխելու տեսակետից ավելի ցածր կարգի ալյուրներն են օգտակար:

- Ձեր փոխնախարարը խոստովանեց, որ անասնակեր են ներմուծել: Փաստորեն, անասնակեր բերելու առիթով այդքան մեծ աղմուկ էիք բարձրացրել:

- Ես մի բան ասեմ՝ նույն կովերը, ոչխարները ցորենի հանդերում երբ արոտ են անում, նույն ցորենը կարող են իրենք էլ ուտել՝ կլինի առաջին կարգ, երկրորդ, թե չորրորդ, դա կապ չունի: Եթե դուք դիտարկում եք էդ ձեւի անասնակեր, ոչ թե կոմբիկեր, դա նորմալ է:

- Այո, անասունը կարող է լավ ցորեն ուտել, բայց մարդն անասնակեր չի կարող ուտել...

- Նոր օրինակ բերեցի, որ սեւ հացը գարու ամենացածր որակի ալյուրից է, բայց համարվում է ամենաառողջարարը, այնպես որ... ես տեղյակ չեմ, բայց ես մտածեցի անասնակեր, ուրեմն կոմբիկեր է ներմուծվել: Իսկ մենք չենք կարող այդպես դիտարկել, որովհետեւ, կրկնում եմ՝ անասունները կարող են մեր կերած վարունգն էլ ուտել, մեր կերած ամեն ինչը հավը, խոզը ամեն օր ուտում են, մենք միս ենք ուտում, գիշատիչներն էլ են ուտում, շներն էլ, հիմա ի՞նչ անենք, ասենք՝ մենք անասնակե՞ր ենք ուտում:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՂԵԼ Է ԽԱՅՏԱՌԱԿ ՑԱԾՐ՝ 22,8 ՏՈԿՈՍ ՑՈՐԵՆԻ ԲԵՐՔ

«Հրապարակի» զրուցակիցը գյուղատնտեսության նախկին փոխնախարար **Աշոտ Հարությունյանն** է:

- Իշխանությունները ցնծության մեջ են. Ռուսաստանից, ապա Ղազախստանից՝ Ադրբեջանի տարածքով Հայաստան ցորեն են ներմուծել, ինչը մենք պարզել ենք, որ վարակված ցորեն է, որը բացառապես որպես անասնակեր կարելի է օգտագործել: Փաստորեն, չկա պատշաճ վերահսկողություն, եւ վտանգավոր ցորենից կարող են հաց թխել: Ըստ Ձեզ՝ ինչ հետեւանքներ այն կարող է ունենալ:

- Ես դեռ վաղուց եմ կասկածներ ունեցել՝ որակի հետ կապված: Բնական է, դրսից է գալիս, ինչ ասես, կարող է լինել, բայց ո՞վ պետք է վերահսկի, որպեսզի հիվանդություններ չլինեն, վնասատուներ ու վարակներ չլինեն: Այն ոչ միայն վտանգավոր է որպես սնունդ կիրառելու համար, այլեւ՝ հողերի վարակման համար: Կարող են ցանել այն եւ հողերը վարակել, ինչն ամբողջապես կվտանգի ոլորտը: Հացի ցորենը պետք է, միանշանակ, բարձրակարգ լինի: Վերջին դասի ցորենը, մեկ բառով ասած, «ֆուրաժ» է՝ անասնակեր եւ չի կարող մարդկության համար պիտանի լինել, բայց ի՞նչ ասես, ո՞ւմ ասես, սրանց համար Արցախը բեռ էր՝ տվեցին, ուրախացան: Ունենք այսքան նահատակներ, մեր տղերքը չկան, բայց իրենք երջանիկ են, ողջ օրը համերգներ, ֆեստիվալներ, քեֆեր: Ի՞նչ կարող ես ասել սրանց, ո՞ւմ ասես: Ինչքան ծանր օրեր կան՝ սրանց համար ուրախալի, տոն օրեր են: Իրենք իրենց հանձնառությունը կատարում են, իսկ հասկացող մարդիկ շվարած մտածում են, թե էս ինչ է կատարվում: Ժողովուրդը մոլորվել է սրանց ձեռքին, բայց մոլորվելուն էլ չափ պիտի լինի:

- Ինչո՞ւ են կասկածելի ծագման ցորեն ներմուծում Հայաստան: Հայաստանն իսկապե՞ս հացի խնդրի առաջ է կանգնած:

- Մենք հանրապետությունում ամեն տարին տարվա վրա ստանում ենք շատ վատ բերք: Քանակը խայտառակ քիչ է, ինչպես իշխանությունն է սիրում ասել՝ աննախադեպ, խայտառակ ցուցանիշ ենք արձանագրել: Բերքն ահավոր վատն է, ըստ իրենց հրապարակած թվերի՝ 2024 թվականին բերքը եղել է 22,8 տոկոս, այս տարի՝ դրա կեսը, ինչը սարսափելի վատ է, կա ներկրման խնդիր: Հայաստանն ունի պահուստի հետ կապված լուրջ խնդիրներ, սակայն դա չի նշանակում, որ պիտի բերեն, մի հատ էլ ժողովրդին հացի խնդրի առաջ կանգնեցնեն: Քիչ աղետ են իբր բերել, հիմա էլ մնում էր հացի խնդիրը: Ադրբեջանի տարածքով ցորենի անունը ես դրել եմ արյունոտ ցորեն: Մեզ արյունոտ ցորեն ընդհանրապես հարկավոր չէ: Արյունոտ ցորենը հատուկ տեսարաններ սարքելու համար է:

- Իսկ ի՞նչն է պատճառը, որ հայկական ցորենի բերքը տարեցտարի վատանում է:

- Ամեն ինչ գալիս է նրանից, որ մենք իշխանություն չունենք: Ունե՞նք իշխանություն, գուցե ունենք, ե՞ս չգիտեմ: Մենք ղեկավար ունե՞նք, կամ կառավարություն, ունե՞նք համապատասխան մասնագետներ: Կամ անվտանգության համակարգ: Այս ուղղությամբ որեւէ մասնագետ չի աշխատում: Գյուղատնտեսության նախարարության չլինելը դեռ մի կողմ դնենք, դա չարյաց փոքրագույնն է: Պատկերը խայտառակ է: Ընտրությունը վատի ու վատագույնի միջեւ է: Նախորդ կիսամյակ ցորենի վիճակը եղել է վատ, այս կիսամյակ՝ սարսափելի, ծայրահեղ վատ:

- Ինչպե՞ս եք տեսնում այս խնդրի լուծումը: Ինչպե՞ս բացառել վարակված եւ կասկածելի ցորենի կիրառումը Հայաստանում: Առաջ ինչպե՞ս էին լուծվում նման խնդիրները:

- Առողջ ցորենի խնդիր մենք չենք ունեցել: 99 տոկոս բարձր կարգի ցորեն Հայաստան է մտել Ռուսաստանի Դաշնությունից: Որպես ԵԱՏՄ երկիր, որպես ՀԱՊԿ անդամ ու բարեկամ երկիր՝ Հայաստանն ունեցել է այդ հնարավորությունները: Հիմա սրանք արտաքին քաղաքական վեկտորը փոխում են, ասում են՝ ցորենի տեղը թող գրող ուտեն, պետք եղած դեպքում եկեք այս հարցն էլ շրջանցենք: Խնդիրները շատ-շատ են: Նույնիսկ եթե այս պահի դրությամբ նույն ուղով ներկրվեր սերմացու ցորեն, այլ ոչ թե հացի, ես՝ որպես մասնագետ, խնդրելու էի մանրակրկիտ ստուգել լաբորատորիաներում: Կարանտին հիվանդություն կա, կան վնասատուներ: Չի բացառվում, որ ՌԴ-ից եկած ցորենը որոշ ժամանակ ղազախականի անվան տակ կիրառեն, մարդկանց թմրեցնեն, սակայն թե հետո ինչ որակի ցորեն կգա, դա կմնա գաղտնի: Այդ եղանակով կարող են մարդկանց սթափությունը նվազեցնել, սակայն այստեղ խնդիրը ոչ միայն մարդկային կյանքեր վտանգելու հարցն է, այլեւ՝ դաշտերի վարակման: Ոչ վաղ անցյալում՝ առաջին նախագահի տարիներին, Թուրքիայից Հայաստան ներմուծվեց վարակված կարտոֆիլ, որը մինչ օրս Արագածոտնի մարզում մեծ խնդիր է: Կարանտինը որոշ դաշտերում չեն կարողանում վերացնել, հողը բուժել: Ինչ վերաբերում է այս «շնորհակալություններին», «ցնծություններին», ապա այդ ամենի փոխարեն լավ կանեն՝ սերմացուի հարց լուծեն, վտանգները կանխեն, գարնանացանով ապահովեն, անտեղի ինչ-որ քայլեր են անում եւ մարդկանց հույզերի հետ են խաղում: 1000 տոննա այդ «աննախադեպ» ցորենի ներկրումը Հայաստանի համար մի քանի ժամվա խնդիր է լուծում, այն էլ՝ միայն սննդի համար, այլ ոչ թե անասնակերի եւ մյուս հարցերի: Մենք, այսինքն, ամեն օր պիտի լարված սպասենք, թե երբ ցորենը կգա, որտեղից եւ ինչ վիճակով:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՉԵԿՈՒՅՑ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԱՅԵԼ ԵՆ «ԶՈՆ ՆԱՅՈՂՆԵՐԻ» ՄՆՆԴՅԱՆ ՕՐԵՐԻ ՏԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դատախազության 2024 թ. հաշվետվության մեջ բավականաչափ տվյալներ կան, որոնք վկայում են, թե ինչ դժոխային իրականություն է Հայաստանի քրեակատարողական հաստատություններում: Նախ, կարելի է ասել, որ վաղաժամկետ ազատման ինստիտուտը չի գործում: Վերասոցիալականացման գնահատման միավորային համակարգը, որն իբր պետք է օգներ օրինակելի դատապարտյալներին՝ ազատության մեջ հայտնվել, ձախողված է: Դատապարտյալների դիմումները հիմնականում մերժվում են, բողոքարկման դիմումները չեն բավարարվում: Դատախազների կողմից 2024-ի ընթացքում, ըստ վիճակագրության, բերվել է 58 վերաքննիչ բողոք՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ, որից բավարարվել է ընդամենը 10-ը:

Հետաքրքիր է, որ որոշակի փոփոխություն է եղել դատախազ-դատավոր դերերում: Նախկինում հսկող դատախազներն էին խոչընդոտում դատապարտյալների ժամկետից շուտ ազատմանը, այժմ՝ դատարաններում: Հատկապես վատ վիճակում են հանցագործների, հաշվի չառնելով ո՛չ նրանց դրական բնութագրերը ՔԿՀ-ից, պրոբացիոն ծառայությունից, ո՛չ այն, որ նրանք երկար վերասոցիալացման գործընթաց են անցել»: Ժաննա Ալեքսանյանը հիշեցնում է, որ այդ նույն դատախազության ապօրինի մեղադրանքներով դատապարտված մարդիկ կան: Մենք միշտ պետք է հիշենք, թե ինչ չկայացած դատական համակարգ ունեինք, երբ կայացվել են ցմահ ազատազրկման դատավճիռներ: Նրանց մեջ նույնիսկ անմեղ դատապարտված անձինք կան, բայց դատախազությունը շարունակում է պաշտպանել իր ապօրինի մեղադրանքները: ՔԿՀ-ներում, ըստ դատախազության հաշվետվության, ծանր հիվանդներին եւս չեն ազատում: Պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելու վերաբերյալ բերված բողոքներից ոչ մեկը չի բավարարվել: 8 բողոք է եղել: Այս վիճակագրությունը կալանավայրերում տիրող դաժանության պարզ արտացոլումն է:

Քրեակատարողական ծառայությունը հաճախակի հաղորդում է տարատեսակ խուզարկությունների, բջջայիններ եւ այլ արգելված իրեր գտնելու մասին: Թե որտեղ են հետո դրանք հայտնվում, ՔԿԾ-ն լռում է: Լուրեր կան, որ այդ իրերը հետո արագ վերադառնում են խցեր, որոշակի գումարի դիմաց: Դատախազության հաշվետվությունն անուղղակի հաստատում է այդ խոսակցությունները: Օրինակ, «Արմավիր» ՔԿՀ-ում դատախազությունը հայտնաբերել է ձեւավորված աշխատանքային պրակտիկա, երբ առգրավված հեռախոսները, բաժանորդային քարտերը, համացանցի տարածման (wifi) սարքերը եւ այլն, հետ են վերադարձվել: «Մինչդեռ, քրեակատարողական օրենսդրությամբ եւ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 543-Ն որոշմամբ նման կարգավորումներ նախատեսված չեն»,- ասված է հաշվետվությունում:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարը եւս հաջող չի ընթանում: Դատախազությունն «Արմավիր» եւ «Վանաձոր» ՔԿՀ-ների ղեկավարությունից պահանջել է «հեղինակությունների» ծննդյան օրերի եւ Ամանորի տեսագրությունները, եւ բացահայտել են, որ այդ օրերին «քրեական ենթամշակույթին հարող անձանց» խցերում բաց կերակրադռնակներին խմբերով անձինք են մոտենում, անարգել հանձնուքներ են փոխանցում, խցերի մոտ մարդկային կուտակումներ են առաջանում: ՔԿՀ-ի մասնաշենքում պահվող շուրջ 105 անձ հերթով, երբեմն 4-5 անձից բաղկացած խմբերով մոտեցել են «զոն նայողի» խցին: «Նկարագրված գործողությունները կատարվել են ՔԿՀ իրավասու պաշտոնատար անձանց ներկայությամբ, ովքեր ոչ միայն այս խախտումները կանխելու կամ խափանելու ուղղությամբ որեւէ միջոց չեն ձեռնարկել, այլեւ իրենք են մոտեցել հիշյալ խցերին, վերցրել եւ փոխանցել հանձնուքը»,- գրում է դատախազությունը՝ արձանագրելով «անգործություն»՝ «ՔԿՀ 151 ծառայողները զերծ են մնացել իրենց օրինական պարտականությունները կատարելուց»:

Ի՞նչ խմբերի մասին է խոսքը: ՔԿՀ հաճախ այցելող փաստաբան **Հակոբ Ճարոյանը** պատմում է, որ դատապարտյալների թվում կան մարդիկ, որոնք ցանկանում են բարձր միավորներ ունենալ եւ աշխատանքներ են կատարում կալանավայրում: Դրա մեջ մտնում է քրեական ենթամշակույթ կրողների խցերում հանձնուքի բաշխումը: «Հանձնուքը ընդունման կետից հատուկ կալանավորները ստանում են, տալիս նրանց: Բերդ նստածները սովորաբար պայմանավորվում են, թե այսինչ օրը ում են բերելու: Դրա համար էլ կերակրադռնակները բաց են: Սա առանձնապես մեծ խախտում չէ: Ավելի լավ է՝ դատախազությունը մտածի այն մասին, որ կալանքի որոշումներն այնքան շատ են, որ քրեակատարողական հիմնարկներում տեղ չկա, նրանք հրաժարվում են ընդունել նոր կալանավորների: Արդյունքում, ասենք, Երեւանի բնակիչներին, որոնց դատն այստեղ է, տանում, հասցնում են Վանաձոր, կան դեպքեր, երբ նրանց 2 օրը մեկ հարցաքննությունների են բերում Երեւան: Լավ կլինի, որ դատախազությունը սրա մասին մտածի»,- ասում է փաստաբանը:

Դատախազության միջնորդություններից հետո ծառայողական քննություններ են անցկացվել, եւ 13 աշխատակից ենթարկվել է կարգապահական տույժի, այդ թվում՝ 1 անձի ծառայությունը դադարեցվել է:

Դատախազությունն ուսումնասիրել է նաեւ «Արմավիր» ՔԿՀ-ում պահվող կալանավորվածների կամ դատապարտյալների անձնական կամ խցերի խուզարկության, հագուստի եւ իրերի զննման ժամանակ վերցված եւ ՔԿՀ վարչակազմին ի պահ հանձնված առարկաների, իրերի, դրամի «պահման ու տնօրինման համապատասխանությունը գործող քրեակատարողական օրենսդրության եւ այլ իրավական ակտերի պահանջներին»: Արդյունքում պարզվել է, որ «Արմավիր» ՔԿՀ-ում այդ իրերն ու սարքերը «պահվող անձի դիմումի հիման վրա» հանձնվել են դիմումում նշված անձանց: Մինչդեռ, նման կարգավորումներ նախատեսված չեն:

«Նուբարաշեն» եւ «Աբովյան» ՔԿՀ-ների դատապարտյալներն էլ բողոքել են սննդի որակից, ստուգումներ են իրականացվել, եւ Սննդամթերքի անվտանգության մարմինն արձանագրել է, որ մատակարարված սննդի նմուշները չեն համապատասխանել պայմանագրով նախատեսված բնութագրի պահանջներին: Ուսումնասիրելով հիվանդ դատապարտյալների բողոքները՝ դատախազությունը հայտնաբերել է, որ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանման կողմից պատշաճ բժշկական օգնություն եւ սպասարկում նրանց չի տրամադրվել: «Արմավիր» ՔԿՀ-ում, օրինակ, բժշկական մասնաշենքում պահվել են անձինք, որոնք դրա կարիքը չեն ունեցել:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՄԵՆՔ ԼԻՆԵԼՈՒ ԵՆՔ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՂԸ

«Հրապարակի» զրուցակիցը Վաղարշապատի ՏԻՄ ընտրություններում «Մայր Հայաստան» կուսակցության առաջին համար՝ համայնքապետի թեկնածու **Գրիշա Հարությունյանն** է:

- Ընտրություններին հաշված օրեր են մնացել: Ինչպե՞ս է ընթանում նախընտրական քարոզարշավը: Իշխանական թեկնածուն վարչական ռեսուրս է կիրառում, խոստումներ տալիս...

- Քարոզարշավը շատ նորմալ ընթանում է: Մարդկանց վերաբերմունքը մեր հանդեպ շատ դրական է: Ընտիր քարոզարշավ ունենք: Անկեղծ եմ ասում՝ այս օրերին գեթ մեկ մարդու չեմ հանդիպել, որ մեզ վատ վերաբերմունք ցույց տված լինի, արհամարհի կամ անտեսի: Բոլորն անխտիր դրական են վերաբերվում «Մայր Հայաստանին»: Շրջել ենք գյուղական համայնքներով, Էջմիածնի թաղամասերով, այժմ էլ շարունակվում է քարոզարշավը: Շրջում ենք տարբեր շենքերի բակերով, ծանոթանում ենք մարդկանց խնդիրներին: Մեր ծրագրերն ենք ներկայացնում, մարդիկ հավանություն են տալիս մեզ: Ընդգրկում ենք հարցեր, որոնք բարձրացնում է բնակչությունը: Խոյ համայնքի բնակիչները ջերմատների հետ կապված հարցեր են բարձրացնում, որոնք ներառել ենք մեր ծրագրերում....

- Ինչո՞ւ են դպրոցի տնօրեններ ազատվում աշխատանքից՝ ընդդիմության քարոզարշավներին մասնակցելու համար:

- Իշխանական թեկնածուներն օգտագործում են վարչական ռեսուրս, դա ակնհայտ է, բացարձակ ճշմարտություն է, բայց դրանով պետք է իրավապահ մարմինները զբաղվեն: Թե՛ գյուղական համայնքներում են վարչական ղեկավարներին գործի դրել, թե՛ Էջմիածին քաղաքում: Ասում են նաեւ, որ պետական աշխատողների են աշխատանքից հեռացնում, ուսուցիչների, տնօրենների, փոխտնօրենի եւ այլն:

- Ի՞նչ են անում վարչական ղեկավարները:

- Պաստառներ փակցնելուց սկսած, վարչական ռեսուրս են կիրառում: Ամեն հարցում:

- Ի՞նչ եք կարծում՝ կարո՞ղ եք 50+ հավաքել եւ հաղթանակ արձանագրել:

- Մենք լինելու ենք ընդդիմության համախմբողը, փորձելու ենք համագործակցել իրական ընդդիմության հետ, իսկ առհասարակ ես կարծում եմ, որ մենք հաղթելու ենք եւ նոյեմբերի 17-ից ունենալու ենք նոր Վաղարշապատ խոշորացված համայնք:

- Այսինքն՝ եթե 50+ չհավաքի որեւէ ընդդիմադիր ուժ, Գյումրիի օրինակով միավորվելու եք:

- Անկեղծ ասած, «եթե»-ն հարաբերական է ասված: Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի 50+ ձայն հավաքենք, իսկ եթե Ձեր ասածի պես որեւէ ուժ չհավաքի այդքան ձայն, ապա իրական ընդդիմության հետ համագործակցելու ենք:

- Ի՞նչ ասել է՝ իրական ընդդիմություն: Ընդդիմության ոչ իրականը լինո՞ւմ է: Ո՞ր ուժն է կեղծ ընդդիմության տպավորություն թողնում:

- Դե, օրինակ, Արամ Սարգսյանի կուսակցությունը, մենք նրանց չենք համարում ընդդիմություն եւ որեւէ պարագայում այդ ուժի հետ չենք պատկերացնում համագործակցություն, այնպես, ինչպես ԲՊ-ի հետ, մեզ համար չկա տարբերություն այդ 2 կուսակցությունների միջեւ:

- Իրենք իրենց ընդդիմադիր չեն համարում, ուր մնաց դուք համարեք:

- Այո, ես էլ եմ այդ կարծիքին, իրենք էլ իրենց չեն համարում ընդդիմություն, հակառակ դեպքում նման քայլեր չէին անի:

- Ընդդիմադիր ուժերին ԲՊ-ն փորձում է կապել նախկին նախագահների, Դաշնակցության հետ: Ի՞նչ կասեք այս մասին:

- Մենք առանձին նոր ուժ ենք, ոչ մի կապ չունենք նախկին իշխանությունների եւ ներկա իշխանությունների հետ: Դրանք կեղծ տեղեկություններ են, իրականությունը խեղաթյուրող:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հարցման արդյունքները չեն հուսադրում

Մեր տեղեկություններով, ՔՊ-ն Վաղարշապատում ներքին հարցում է անցկացրել նոյեմբերի 16-ի ՏԻՄ ընտրություններին ընդառաջ եւ, մեղմ ասած, ոգեւորիչ արդյունքներ չի գրանցել: Չնայած, ըստ իշխանական հարցման արդյունքների, ՔՊ թեկնածու Արգիշտի Մեխակյանն առաջին հորիզոնականում է, եւ դա բնական է, հաշվի առնելով, թե վարչական ինչ ռեսուրս է օգտագործվում ընտրությունների նախաշեմին, սակայն Մեխակյանի վարկանիշը չի ձգում 50-ի, իսկ նրան մի քիչ զիջում է Սեւակ Խաչատրյանը, երրորդ տեղում եւս արմատական ընդդիմության ներկայացուցիչն է՝ «Մայր Հայաստան»-ի թեկնածուն, որը Խոյի վարչական ղեկավար է եղել եւ լայն կապեր ունի: Այսինքն՝ մեծ է հավանականությունը, որ Էջմիածնում եւս կրկնվելու է Գյումրու սցենարը, եւ հետընտրական փուլում ընդդիմադիր դաշինք է ձեւավորվելու, որի արդյունքում ՔՊ-ն դառնալու է ընդդիմություն: Մեզ ասացին, որ վարկանիշը բարձրացնելու նպատակով ՔՊ-ում անգամ որոշ խորամանկություններ են դիմել՝ ամենասկզբում իրենց պաստառների վրա մեծ տառերով նշվում էր կուսակցության անունը՝ «Քաղաքացիական պայմանագիր», հիմա մնացել է փոքրիկ ձեռքսեղմման լոգոն, փոխարենը մեծ տառերով գրվում է «Մեխակյան»:

ՀՈԳԵԲԱՆ

Նիկոլ Փաշինյանն ամեն անգամ սպասում է բումի, սակայն ստանում է ճիշտ հակառակը

Նիկոլ Փաշինյանը շարունակում է ակտիվ ֆեյսբուքյան գործունեությունը, նա առավոտյան սրտիկներ է ուղարկում մարդկանց, ռոմանտիկ երաժշտություն է լսում, հետո սկսում է ստատուսներ գրել նախկին նախագահների, Հայ առաքելական եկեղեցու սպասավորների ու ընդդիմադիրների մասին: Երբեմն ուղիղ տեքստով հրահանգում է կալանավորել ու պատժել, երբեմն ժողովրդի հետ հանդիպումների ժամանակ է խոստանում պատժել, չնայած բանտերում արդեն ազատ տեղ չկա, իսկ 2018-ից ի վեր համաներում էլ չի հայտարարվել: Նիկոլ Փաշինյանի գործողություններն ու մոտեցումները հոգեբանական տեսանկյունից ինչպե՞ս կարելի է բնորոշել: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է հոգեբան **Արկադի Մեհրաբյանի** հետ:

- Ամեն կիրակի վարչապետը պատարագների է մասնակցում, ճիշտ է՝ շատ քիչ մարդկանց հետ, բայց չի դադարեցնում այդ գործընթացը: Դրանցից երկուսը Հովհաննավանքում տեղի ունեցան՝ կարգալույծ հռչակված նախկին հոգեւորականի կողմից, մյուսը՝ Թալինում, իսկ հաջորդ կիրակի նախատեսում է մեկնել Վայոց Ձորի Խաչիկ գյուղ: Փաշինյանը նաեւ հոգեւորականներին է մեղադրում անբարո կյանքով ապրելու մեջ, չնայած իր թիմն այս ոլորտում ռեկորդներ է սահմանել եւ այլն: Ըստ Ձեզ՝ ինչ է ցանկանում անել Նիկոլ Փաշինյանն իր այս քայլերով:

- Անկեղծ ասած՝ Նիկոլ Փաշինյանի քայլերը հոգեկան խնդիրներ ունեցող մարդու գործողություններ են հիշեցնում: Նրա արարքները պետք է զննության ենթարկեն հոգեբույժները, հոգեբաններն այդ հարցում անզոր են: Ես կարող եմ ասել մի բան, որ Փաշինյանի գործողությունները հասարակության վրա առաջվա համեմատ շատ քիչ ազդեցություն են թողնում: Պոպուլիզմի դրսեւորումներով նա փորձում է ինչ-որ քայլերի հասնել: Նպատակը գուցե հասարակությանը շեղելն է, գուցե այդ մարդն իսկապես պարապ է եւ չգիտի, թե ինչով զբաղվի, կամ, ասենք, դրսից է հրահանգ ստացել, այնուամենայնիվ, կարող ենք փաստել, որ նրա քայլերն այլեւս առաջվա նման մեծ ազդեցություն չեն թողնում մարդկանց վրա: Հատկապես 2018 թվականին իրավիճակը լրիվ այլ էր: Եթե տարիներ առաջ նրա ամեն մի խոսքը հալած յուղի տեղ ընդունվում էր, ապա այսօր մեծ զանգվածները նրա ասածներին լուրջ չեն վերաբերվում, ավելին՝ մերժում են նրա գաղափարները: Դա նշանակում է, որ այս մարդուն աջակցում է հանրության մի փոքր զանգվածը: Սա լավ նախադեպ է: Մարդիկ սկսել են մտածել՝ վստահե՞լ այս մարդու ասածներին, թե՞ ոչ: Եկեղեցին, անկախ ամեն ինչից, առանձին ինստիտուտ է: Այո, թե՛ կաթողիկոսը, թե՛ հոգեւորականներից շատերն ունեն մեծ թերացումներ եւ շատ վատ բաներ են արել, սակայն դա պետության գործը չէ, եւ ոչ մի իշխանություն իրավունք չունի խառնվել Եկեղեցու գործերի մեջ: Եթե Սահմանադրությունն ասում է՝ պետությունն անջատ է Եկեղեցուց, դա նշանակում է, որ իշխանությունների կողմից չի կարող լինել անմիջական միջամտություն: Հակառակ դեպքում գործ ունենք սահմանադրական կարգի տապալման հետ: Շարքային հավատացյալի համար այս ամենն անընդունելի է: Հավատացյալ մարդը մտածում է, որ Աստծո գործերն անքննելի են: Այս ֆրազը շատ ավելի ուժեղ է ու աշխատող, քան Նիկոլի արած բոլոր հայտարարությունները: Հայ հանրությունն ավելի հակված է դեպի Հայ առաքելական եկեղեցին, քան այն պնդումները, որոնք պարբերաբար անում է Ն. Փաշինյանը: Նիկոլ Փաշինյանը չի ստանում այն բումը, որը լինում էր տարիներ առաջ: Նա ամեն անգամ սպասում է բումի, սակայն ստանում է ճիշտ հակառակը:

- Ամեն առավոտ վարչապետը սրտիկներ է ուղարկում քաղաքացիներին՝ ռոմանտիկ, երբեմն՝ ռաբիս երաժշտության ներքո: Սա ինչ դրսեւորում է, ինչ էմոցիա կա այստեղ:

- Այստեղ չկա էմոցիա: Դա մեկ բան է նշանակում՝ այդ մարդը կոմպետենտ չէ այդտեղ գտնվելու: Եթե մի ղեկավար այնքան ժամանակ ունի, որ կարող է նման զբաղմունքներ ունենալ, ապա դա նշանակում է, որ նա իր տեղում չէ: Ի վերջո՝ երկրի անվտանգությունը մազից է կախված, իրենք են խոստովանում, թե ինչ վտանգներից է կախված երկիրը: Եվ այդքանից հետո անել այն, ինչն իրենք են անում, չգիտեմ, ինչ բնորոշում կարելի է տալ այդ մարդուն: Ես կասկածներ ունեմ, որ նա լուրջ խնդիրներ ունի՝ հոգեկան առողջության հետ կապված:

- Բայց ասում են՝ այնքան լավ են հարաբերություններն Ադրբեջանի հետ, որ Ադրբեջանի տարածքով ցորեն ենք բերում Հայաստան:

- Դե, մեզ մնում է ավելացնել, որ հոգեկան խնդիրներին զուգահեռ, այդ մարդը նաեւ մտավոր հետամնաց է: Ադրբեջանով ցորեն բերելն անվտանգության գրավական կարող են համարել միայն այն մարդիկ, ովքեր ունեն մտավոր զարգացման խնդիրներ: Մինչեւ հիմա անվտանգության երաշխավորը եղել է բանակը, դիվանագիտությունը:

- Իսկ Ալիեւի հայտարարություններն ինչ ազդեցություն են թողնում մեր հանրության վրա:

- Շատ վատ: Ցավոք, մեր հասարակությունն ավելի շատ հակված է հավատալու թշնամի պետության ղեկավարին, քան՝ իր: Մեր ժողովուրդը վախերի մեջ է ապրում: Մեկը մեկին վախ է փոխանցում: Ալիեւն ինչ ասել է, ճիշտ է դուրս եկել: Օրինակ՝ հայկական կողմը երբ ասում էր՝ հաղթում ենք, սխալ դուրս եկավ, իսկ Ալիեւի բոլոր ասածները՝ ճիշտ, սա էլ իր հերթին մարդկանց մտածողության վրա մեծ ազդեցություն է թողել: Ռացիոնալ մտածող մարդը թշնամական երկրի ղեկավարի հայտարարություններին ավելի շատ է սկսել հավատալ: Դա կարող է բացասական ազդեցություն ունենալ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հիշատակի օ՞ր, խնդրեմ, ինչքան ուզեք

Իշխանությունները չգիտեն ուր խցկել հայրենիքի համար զոհվածների հիշատակի օրը: Շատ են մտածել այս մասին, օրուգիշեր չեն քնել՝ ոնց անեն, որ այդ օրը չխանգարի իրենց վարած քաղաքականությանը, չվնասի խաղաղությանը, մի բան էլ նպաստի իրենց PR-ին: Այնպես էլ չէր, որ մենք հիշատակի օրեր չունեինք… Բանակի օրն էլ էինք հիշում մեր զոհերին, Շուշիի գրավման օրն էլ, Եռաբլուր այցելությունների օրերին էլ: Ծիծեռնակաբերդում մենք Սումգայիթի զոհերի հուշատախտակ էլ ունեինք: Մենք էինք՝ մեր զոհերը, մեր հերոսները: Այսօր մի սեղան կամ, անգամ հարսանիքի, որի մասնակիցները հոտնկայս չհիշեն հայրենիքի համար կյանքը տված տղերքին: Եվ, ուրեմն, ինչո՞ւ են իշխանությունները, ձեռուոտ ընկած, հիշատակի օր փնտրում: Եթե խնդիրը 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակի օր ունենալն է, մենք 2 այդպիսի օր ունենք արդեն՝ սեպտեմբերի 27 եւ նոյեմբերի 9: Կարող ենք Արցախի հայաթափման օրը վերցնել, Հայաստանի սուվերեն տարածք թուրքերի ներթափանցման օրը, անգամ՝ Պրահայում Փաշինյանի հայտարարության օրը: Ի՞նչ է պատահել, վերջապես, տղերքը զոհվել են, որովհետեւ «Ղարաբաղն» Ադրբեջան էր: Էն ե՞րբ էր, որ Փաշինյանը հռետորական հարց տվեց՝ իսկ ինչո՞ւ էին մեր զինվորները կռվում Ադրբեջանի տարածքում: Եկեք, ուրեմն, մեր զոհերի հիշատակի օր դարձնենք Փաշինյանի այդ հանճարեղ հարցադրման օրը:

Ի դեպ, ՀՀ իշխանությունները տեղյա՞մկ են, որ Արցախում ոչ միայն հայաստանցի զինվորներ են զոհվել, այլեւ՝ արցախցի: Արցախցի զինվորները, ինչ է, հայրենիքի համար չե՞ն զոհվել: Էն Կարապետ Ռուբինյանի որդին ու հերոսացած Արգամի հայրը, որ զոհերի հիշատակի նախագծի համահեղինակներն են, այս մասին մտածե՞լ են… Թե բա՝ հայոց բանակի ծննդյան նախօրեին նշենք, որ հաջորդ օրը տաշի-տուշի անենք: Մի հարցնող լինի՝ էդ ինչների՞դ վրա եք տաշի-տուշի անելու… Դուք այս յոթ տարիներին մեր ո՞ր տոնը չեք հարամել, որ հիմա Բանակի օր եք ուզում նշել: Բա որ ասում են՝ հայրենիքի համար զոհվածների օր… Դուք ո՞ւր, հայրենիքն ուր, արա: Ձեր հայրենիքն իրական Հայաստանն է, իսկ իրական Հայաստանի համար, իմ իմանալով, դեռ ոչ ոք չի զոհվել:

Եթե շատ եք ուզում՝ կարճ կկապեմ: Ս…ր արեք ձեր այդ նախաձեռնությունը, կոխեք ձեր մի տեղը ու գլխիս «վշտացյալ ծաղրածու» մի խաղացեք: Վեր կացեք, ամեն տարի սեպտեմբերի 27-ին եւ նոյեմբերի 9-ին պետական արարողակարգով գնացեք Եռաբլուր: Եթե կարող եք, իհարկե, եւ եթե հայրենիքի զոհերի հիշատակը ձեզ համար կարեւոր է: Երբ էլ ոտք դնեք Եռաբլուր, դա կդառնա հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակի օր:

Մի հարց էլ ունեմ այս կապակցությամբ: Ի՞նչ եք կառուցում Երեւանի բուսաբանական այգում: Անունը դրել եք «Կյանքի պուրակ»: Ավինյան, լսո՞ւմ ես: Դա ո՛չ նոր բուսաբանական այգի է, ո՛չ ՀՀ շարքային համբալների համար նախատեսված զբոսայգի, ո՛չ էլ զբոսաշրջության հատուկ ցուցադրության օբյեկտ: Հազարներով ծառեր եք կտրել, ինչ-որ հուշարձան պիտի տեղադրեք, կարծեմ: Ես նեղ մաջալին ձեզ «Կյանքի պուրամ՞կը» պետք է գեղեցկացներ… Իսկ գուցե ուզում եք հայրենիքի զոհերի հիշատակն այստե՞ղ խնկարկել (ձեր պարագայում՝ խայտառակել), պետական արարողակարգով, Եռաբլուրից հնարավորինս հեռու, որ զոհվածների ծնողների երես չտեսնեք, ձեզ խանգարող չլինի՝ ծնկի իջնել ինչ-որ մտացածին «հուշակոթողի» առաջ: Գալու եք այստեղ՝ հիշատակ հարգող ձեւանաք, հա՞… Ողբամ զձեզ… Այդ այգում ձեր ցերեկով ման եկած տեղերը ես գիշերն եմ ման գալիս: Եկեք նախ ձեր ավերածը տեսեք ու պատասխան տվեք՝ ո՞ւր եք կորցրել այգու տարածքում հայտնաբերված հնամենի խաչքարը: Ե՞րբ պիտի ռադ լինեք դուք, որ մեր երկիրը դառնա մերը:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱԴՐԲԵՋԱՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՑԱՆԿԱՑԱԾ ՀԻՇԱՏԱԿՈՒՄ ՄԱՔՈՒՐ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ Է ԵՎ ՄԻՖ

Սկիզբը՝ նախորդ համարում

«Դրապարակի» զրուցակիցն ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի ժառանգներից **Դոնալդ Վիլսոն Բուշը**:

- Ադրբեջանում շարունակում են կեղծ մեղադրանքներով ապօրինի կալանքի տակ պահել Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարներին, պատերազմի ժամանակ գերեվարված այլ հայ զինվորների: ՀՀ իշխանությունն այս հարցը հանել է Բաքվի հետ հարաբերությունների կարգավորման նախապայմաններից: Ձեր ասոցիացիան եւ Դուք՝ անձամբ, ինչ եք անում՝ այդ ապօրինությունների դեմ պայքարելու, այդ ամենի մասին բարձրաձայնելու համար:

- ԱՄՆ պաշտպանության եւ պետդեպարտամենտներում իմ կապերից գիտեմ, որ նախապայմանների միտումնավոր սահմանափակումը եւ Փաշինյանի կառավարության կողմից Ադրբեջանի հետ այս երկարատեւ խաղաղության գործընթացի ընթացքում արված զիջումների համեմատաբար երկար ցանկը նպատակ ունեն հանգստացնելու Ալիեւին եւ նրա թուրք գործընկերոջը՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունների վերջնական կարգավորման համաձայնագրի հասնելու շարունակական ջանքերում: Ինչ վերաբերում է Միացյալ Նահանգներին, ապա Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորումը նրա գլխավոր նպատակն է: Դա է նպատակը: Խաղաղության հաստատումը եւ սահմանների բացումը կովկասյան տարածաշրջանում նախկին թշնամիների միջեւ մշակութային փոխանակման, ճանապարհորդության եւ առեւտրի համար այն է, ինչ ցանկանում է Միացյալ Նահանգները: Ես վստահ եմ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վերջնական խաղաղության համաձայնագրի ստորագրումից հետո, անօրինական կերպով կալանավորված Արցախի նախկին ռազմական եւ քաղաքական առաջնորդները եւ այլ հայ բանտարկյալներ ազատ կարձակվեն: Իմ կողմից, արձագանքելով այն մեծ փոփոխություններին, որոնց բախվել է Հայաստանը վերջին 5 տարիների ընթացքում, ես օգնել եմ կազմակերպել մի շարք աղմկահարույց, ինքնաբուխ հասարակական բողոքի ցույցեր ամբողջ Ամերիկայում՝ ի աջակցություն Հայաստանի եւ Արցախի, երբ սփյուռքի առաջնորդներն ինձ խնդրել են այդ մասին: Այնուհետեւ՝ Արցախի կորստից հետո ես անմիջականորեն ներգրավվեցի Վաշինգտոնում լոբբիստական գործընթացում (որպեսզի կանխեմ Ալիեւի կողմից մշակութային հետագա ցեղասպանության իրականացումն Արցախում, այն բանից հետո, երբ բոլորը հեռացան), որի արդյունքում Միացյալ Նահանգների Միջազգային կրոնական ազատության հարցերով հանձնաժողովը (UCIRF) կիրառեց ԱՄՆ Կոնգրեսի կողմից Բաքվի ռեժիմի դեմ կիրառվող պատժամիջոցները՝ 2023 թվականին Ադրբեջանը UCIRF-ի «Հսկողության ցուցակից» բարձրացնելով մինչեւ «Հատկապես մտահոգիչ երկրի» (CPC) կարգավիճակ 2024 թվականին: Բացի այդ, սկսած 2024 թ. հունվարից, ժողովրդական մակարդակով ես անմիջականորեն ներգրավված եմ եղել տարածաշրջանային խաղաղության հաստատման գործընթացում՝ կազմակերպելով չեզոք միջավայրում հայ ավետարանական քրիստոնյա հովիվների եւ Ադրբեջանի ավետարանական հովիվների միջեւ առաջին գաղտնի հանդիպումը՝ քննարկելու տարածաշրջանային հաշտեցման ջանքերի մեկնարկը Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ սահմանների վերջնական բացումից հետո: Վերջապես, վերջին 24 ամիսներին ես զբաղված եմ եղել 2011 թվականին սկսածս ծրագրի իրականացմամբ՝ կապելու Հայաստանի առաջնորդներին Վաշինգտոնում ապրող իմ ընկերների հետ, ովքեր ունակ են Հայաստան բերելու ոչ կուսակցական Ազգային աղոթքի նախաճաշի ընկերակցության մոդելը: Այդ ծրագիրը պետք է իրականացվի հաջորդ շաբաթ, երբ նոյեմբերի 14-15-ը Երեւանում կկայանա Հայաստանի Հանրապետության առաջին Ազգային աղոթքի նախաճաշը:

- Օգոստոսի 8-ին Սպիտակ տանն ամենաբարձր մակարդակով ստորագրվեց հայ-ամերիկյան համաձայնագիր, այսպես կոչված, Թրամփի երթուղու, Երեւանի եւ Վաշինգտոնի միջեւ համագործակցության զարգացման մասին: Ինչ ակնկալիքներ ունեք:

- Այո, Նիկոլ Փաշինյանի եւ Իլհամ Ալիեւի միջեւ օգոստոսի 8-ին ստորագրված այս ոչ պաշտոնական խաղաղության համաձայնագիրը, որի վկան էր Դոնալդ Թրամփը, աշխարհին ցույց է տալիս, թե որքան հզոր է Միացյալ Նահանգները Հայաստանը որպես աշխարհի նոր առաջնորդ ավելի ուժեղ դարձնելու համար: Ինչ վերաբերում է TRIPP մայրուղուն, սա պարզապես խորհրդանշական, թեեւ շատ շոշափելի, առաջին քայլն է շատ ավելի լայն ծրագրում՝ հին խորհրդային դարաշրջանի երկաթուղային գծերը մեկ մեծ տրանսպորտային հանգույցի մեջ միացնելու համար՝ ճիշտ այնպես, ինչպես Փաշինյանը ներկայացնում է այն իր «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունում: Եվ սա է Հայաստանի պայծառ ապագան՝ վերադառնալ իր օրինական եւ պատմական դերին՝ որպես «խաչմերուկների պահապան»: Ինչպես հասկացա պատմության խոր ուսումնասիրությունից, սա այն դերն է, որը Հայաստանը խաղացել է մարդկության պատմության գրեթե 6000 տարվա ընթացքում: Այս երկար ժամանակամիջոցում, անկախ նրանից, թե որ կայսրությունն է տիրել այս տարածքին, հայերը, որոնք բնիկ են այս «ծովերի միջեւ գտնվող երկրում», ծառայել են որպես խաչմերուկ ամբողջ արեւմտյան կիսագնդի համար: Այսպիսով, դեռեւս վիկինգների նավարկությունից շատ առաջ կամ նույնիսկ մինչեւ Մովսեսի՝ Սինայի լեռից իջնելը հայերն ապրել են այս նույն հողի վրա, որը ծառայում է որպես երեք մայրցամաքները միացնող ամեն ինչի խաչմերուկ՝ պատմության, մշակույթի, լեզվի, նարատիվների, առեւտրի, պատերազմի եւ, այո, խաղաղության: Ես կարծում եմ, որ Միացյալ Նահանգները եւ Հայաստանը բնական դաշնակիցներ են՝ բազմաթիվ ընդհանուր արժեքներով, եւ դա ինձ ստիպում է շատ դրական վերաբերվել Հայաստանի ապագային:

- Վերջերս նույն TRIPP նախագծի շրջանակում Հայաստան էր այցելել ամերիկյան պատվիրակություն, քննարկվում է Սյունիքով Ադրբեջանը Նախիջեւանին կապող ճանապարհահատվածը 99 տարով ԱՄՆ-ի տնօրինությանը հանձնելու մասին: Սա կարող է զսպել Ալիեւի բռնապետական ռեժիմին Հայաստանի վրա հնարավոր ռազմական սադրանքը:

- Ինչպես նշեցի, Ադրբեջանի՝ Հայաստանի վրա կրկին հարձակվելու կարողության կամ պատրաստակամության մասին ցանկացած հիշատակում մաքուր քարոզչություն եւ միֆ է: Վերջերս TRIPP նախաձեռնության մանրամասները քննարկելու համար ամերիկյան պատվիրակության ներկայությունը եւ այդ մայրուղու՝ ԱՄՆ-ի կողմից կառավարման 99-ամյա դրույթը լավ ցուցանիշ է, որ Ամերիկան այժմ պատրաստ է հանրային եւ տեսանելի դեր խաղալ Հարավային Կովկասում դրական արդյունքների հասնելու գործում:

Արա ԱԼՈՅԱՆ

ԶԻՆՎԱՌԱՅՈՂԻՆ ՄԵՂԱԴՐՈՂ ՔՆՆԻՉՆ ԻՆՔՆ ԷԼ Է ՆՈՒՅՆ ԽԱԽՏՈՒՄՆ ԱՐԵԼ

Նախկին զինվորական սպա, փաստաբան **Վահագն Գրիգորյանին** մտահոգում է, որ զինվորական ցմահ կենսաթոշակ ստացող սպաները ծառայությունը շարունակելու դեպքում խնդիրներ են ունեցել, նրանց նկատմամբ քրեական գործեր են հարուցվել: Փաստաբան Վ. Գրիգորյանը մեզ հետ զրույցում պատմեց. «ՀՀ զինված ուժերի մի շարք սպաներ, այդ թվում՝ Արցախյան պատերազմի մասնակից, քրեական հետապնդման են ենթարկվում այն բանի համար, որ տարիներ առաջ, երկարամյա զինվորական ծառայության հիմքով ցմահ կենսաթոշակի անցնելուց եւ տարիներ շարունակ այն ստանալուց հետո, կրկին անցնելով զինվորական ծառայության, պետությանը չեն խնդրել դադարեցնել կենսաթոշակի վճարումը եւ ստացել են այն: Հայտնեմ, որ նրանք ունեցել են եւ շարունակում են ունենալ աշխատավարձին զուգահեռ կենսաթոշակ ստանալու իրավունք, քանի որ այդ ժամանակ գործող օրենքով կենսաթոշակը նշանակվել է ցմահ, եւ այն դադարեցնելու հիմքեր չեն եղել: Հատկանշական է, որ կենսաթոշակն ու աշխատավարձը նշանակում եւ տալիս է պետությունը, իսկ դրանց հիմքերը գտնվում են նույն գերատեսչության՝ պաշտպանության նախարարության իրավասության ներքո, հետեւաբար, խարդախություն դիտել այն, որ անձն իր վրա չի վերցրել պետության գործառույթը, ճիշտ չէ: Ավելին, համանման գործով առկա է ուժի մեջ մտած վճիռ, որով դատարաններն արձանագրել են, որ կենսաթոշակն անձի սեփականությունն է, ուստի դրա դադարեցումը համարվում է սեփականության իրավունքից զրկում, ինչը կարող է տեղի ունենալ բացառապես դատական կարգով, եւ որեւէ գերատեսչություն իրավասու չէ դադարեցնել կենսաթոշակ ստանալու իրավունքը: Նշված վճիռը, որպես իրավական փաստարկ, ներկայացվել է դատախազություն: Սրանք իրավական հարցեր են, որոնք պետք է քննարկվեն իրավական ընթացակարգի շրջանակում, սակայն զավեշտալի ու, մեղմ ասած, ոչ էթիկական է այն, որ զինվորականներին այդպիսի մեղադրանք ներկայացրած ՀՀ ՔԿ զինվորական քննչական վարչության քննիչը համանման հանգամանքներում, անձամբ ստացել է կենսաթոշակ (Դատական գործ՝ ԱՐԱԴ/4763/02/23): Եվ ամենացավալին. քննիչն ու հսկող դատախազը նախաքննությունն ավարտելու նախորդ օրը կասեցրել են ամբողջ կյանքը բանակին նվիրած զինծառայողի պաշտոնավարումը՝ համարելով, որ նա կարող է խոչընդոտել քննությանը: Հուսով ենք, որ քննչական մարմինների եւ դատախազության մեր գործընկերները հարգանքով կվերաբերվեն զինծառայողների իրավունքներին եւ զերծ կմնան քրեական օրենսգրքի նման խտրական ու բիրտ կիրառությունից, կվերականգնեն անհիմն խախտված իրավունքները, իսկ դրանք խախտած պաշտոնյաների նկատմամբ կնախաձեռնվի կարգապահական վարույթ»:

Մենք պարզեցինք, որ այս գործը քննած քննիչը՝ Արտակ Իսկանդարյանը, եւ կանգնել է դատարանի առաջ, եւ ստիպված է եղել փոխհատուցել պետությանը պատճառված վնասը: Ահա այդ վճռի եզրափակիչ մասը. «2024թ. ապրիլի 4-ին Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննել է քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Միասնական սոցիալական ծառայությունն ընդդեմ Արտակ Գագիկի Իսկանդարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: Ա. Իսկանդարյանին 2017թ. սեպտեմբերի 7-ից նշանակվել եւ վճարվել է զինվորական երկարամյա ծառայության կենսաթոշակ: Արտակ Իսկանդարյանը 2021թ. ապրիլի 8-ից աշխատանքի է անցել ՀՀ քննչական կոմիտեում, ինչի մասին, 2021թ. սեպտեմբերի 8-ի հայտարարության համաձայն, չի տեղեկացրել կենսաթոշակ նշանակող մարմնին: Դատարանը վճռել է հայցը բավարարել, Արտակ Իսկանդարյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 1 միլիոն 971 հազար 300 դրամ՝ որպես ոչ իրավաչափ վճարված կենսաթոշակի գումար»:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«Գերեզմանատան ճանապարհով՝ դեպի ներքեւ». «զուտ անգլիական պարանոյայի» պրեմիերա

Apple TV+-ում տեղի է ունեցել «Գերեզմանատան ճանապարհով՝ դեպի ներքեւ» սերիալի պրեմիերան, որը կինոքննադատներն արդեն հասցրել են անվանել «զուտ անգլիական պարանոյա»: Այն մասնավոր խուզարկու Զոյա Բյոմի մասին վիպաշարի էկրանավորումն է: Գլխավոր հերոսուհուն մարմնավորել է Էմմա Թոմպսոնը: Վիպաշարի հեղինակը Միք Գերոնն է: Նրան պատկանում է նաեւ «Դանդաղընթաց ձիերը» գիրքը, որը, ի դեպ, գրվել է դեռ 2003 թվականին: Appleում թերեւս կենտրոնացած են այս հեղինակի վրա: Ոչնչով աչքի չընկնող, ինչպես ասում են՝ «դժգույն մկնիկ» համարվող Սարա Թաքերի (կերպարը մարմնավորել է Ռութ Վիլսոնը) եւ նրա ամուսնու՝ հավակնոտ գործարար Մարկի (մարմնավորել է Թոմ Ռայլին) տանը, որն աշխատում է որպես ռեստավրատոր, կարեւոր հյուրերի են սպասում: Մարկն ուր որ է խոշոր գործարք է կնքելու եւ իր տուն է հրավիրել ապագա հաճախորդին: Ամեն բան պետք է լիներ բարձր մակարդակով: Սակայն Սարան չի կարողանում այդ «առաջադրանքը» կատարել. լազանիան վառվում է, իսկ որպեսզի բարձրաշխարհիկ զրույց ընթանա, հրավիրել է երբեմնի բոհեմական կյանքով ապրած իր հարեւանուհուն եւ նրա ամուսնուն, ովքեր, մեղմ ասած, ամուսիններին «խայտառակ են անում» իրենց էթիկայից դուրս պահվածքով: Զրույցը ոչ մի կերպ չի ստացվում: Երեկոյի ընթացքում ուժգին պայթյուն է լսվում: Հյուրերի դեմքին են թռչում լուսամուտի ջարդուփշուր եղած ապակիների կտորները: Պայթել էր դիմացի մայթի տունը: Դուրս թռչելով տնից՝ Սարան տեսնում է, թե ինչպես են դեպքի վայրին մոտենում արտակարգ իրավիճակների ծառայությունների մեքենաները, ու փրկարարներն ինչպես են փլատակներից դուրս բերում մի աղջիկ երեխայի, որին այդ օրը հանդիպել էր տուն վերադառնալու ճանապարհին: Աղջնակն այդ ժամանակ համարյա ընկնում էր իր հեծանիվի տակ: Պարզվում է, որ միջադեպից հետո աղջնակը որբացել է: Փորձում է հիվանդանոցում տեսակցության գնալ երեխային, սակայն տարօրինակ բաներ են սկսում կատարվել: Բժիշկները մերժում են երեխային տեսակցելը: Վարձում է մասնավոր խուզարկու, որպեսզի հասկանա, թե ինչ խնդիր կա, ինչու թույլ չեն տալիս մտնել երեխայի մոտ: Հաջորդ օրը պարզվում է, որ խուզարկուն ինքնասպան է եղել: Այդ ընթացքում էլ երեխան է անհետանում հիվանդանոցից, հետո արդեն պատահարի լուսանկարներն են անհետանում տեղական պարբերականի կայքից: Ու այդ ճգնաժամային պահին էլ գործը վերցնում է Զոյա Բյոմը: Նա չի հավատում խուզարկուի ինքնասպանությանը եւ սկսում է սեփական հետաքննությունը: Դիտեք ֆիլմը՝ շարունակությունն իմանալու համար:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՀԱՍՆԵԼ ԱՆՀԱՍԱՆԵԼԻԻՆ. ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Հատված Արտյոմ Մոիսեենկոյի «Հասնելով անհասանելիին» գրքից

Վլադիվոստոկ: Դա այն քաղաքն է, որտեղ ես ծնվել եմ: Քաղաք, որտեղ ես կապրեի ողջ կյանքս, եթե ինձ հետ մի օր տեղի չունենար այն, ինչ որ տեղի ունեցավ: Տասներեք տարի առաջ ավտոմեքենայի վարորդը, որում ես էի նստած, կորցրեց մեքենայի կառավարումը, եւ մենք վթարի ենթարկվեցինք: Ես ողնաշարի վնասվածք ստացա եւ դարձա հաշմանդամ:

Ասում են, թե երկար ժամանակ ես պառկած էի վերակենդանացման բաժանմունքում (ինքս այդ մասին չեմ հիշում), իսկ երբ ուշքի եկա, հազիվ էի կարողանում խոսել: Պառկած նայում էի առաստաղին: Հիշում էի մանկությունս: Ինչպես էինք տղերքով հոկեյ խաղում: Ինչպես ես դարձա քաղաքի լավագույն ռմբարկուն: Հիշում էի, թե ինչպես էի փողոցներով վազվզում իմ առողջ ոտքերով: Հիշում էի, թե ինչպես էր մեր քաղաքում վրա հասնում ամառը, եւ մենք գնում էինք լողալու: Ամառը միշտ տաք ու խոնավ էր մեզ մոտ, իսկ ամառային անձրեւների բերած թարմության մեջ մարդիկ միշտ ինչ-որ նոր բան էին հայտնաբերում իրենց համար:

Զգայություններս վերականգնվում էին աստիճանաբար: Սկզբում ես միայն զգում էի գլուխս: Կարծես գլխիցս ներքեւ ոչինչ չկար: Հետո «վերադարձավ» մարմինս: Ոչ ամբողջությամբ, իհարկե, եւ ոչ միանգամից. վերեւից ներքեւ, դանդաղորեն: Այդ «վերադարձը» տհաճ էր ու ցավոտ: Նույնիսկ ավելին, քան՝ տհաճ: Երբ ինձ մերսումներ էին անում, թվում էր, թե, ահա, այստեղ զգում եմ, իսկ այստեղ՝ ոչ: Ամենից հաճելին ոտնաթաթերի մերսումն էր: Երբ մերսում էին ոտնաթաթերս, մռլտում էի, ինչպես արեւի տակ ջերմանալու նստած կատուն: Իսկ զգալ՝ ես շատ բան էի ստիպված: Հատկապես շատ ցավում էին կոնքերս: Նույնիսկ սկսել էի հավատալ, որ կոնքերիս մեջ փոքրիկ արարածներ են բնակություն հաստատել, որոնք անընդհատ դրանք սղոցում են, սղոցում, սղոցում:

Առաջին խոսակցությունս բժշկի հետ ինձ բոլորովին չուրախացրեց: Ավելի շուտ՝ պարզապես սպանեց: 20 տարեկանում հասկանալ, որ դու այլեւս չես կարողանալու քայլել՝ շատ ծանր է ու ցավոտ: Բայց ինչպե՞ս: Ու ինչքա՜ն պլաններ ունեի, ինչքա՜ն գաղափարներ: Ու ի՞նչ է լինելու դրանց հետ: Ի՞նչ է լինելու իմ կյանքի հետ: Ի՞նչ: Բժիշկն ինձ հանգստացրեց: Սկսեց պատմել պատմություններ, որ ժամանակի ընթացքում որոշ մարդիկ, այնուամենայնիվ, կարողանում են ոտքի կանգնել: Շատ աղոտ հավատացի նրան:

Հասկանում էի, որ վթարի հետեւանքով ստացած վնասվածքներս ինչ-որ կերպ վնասել-խցանել են անոթներս, եւ չի կարելի պարզապես վիրահատել ու մաքրել այդ անոթները: Հիվանդանոցում այն ժամանակ ինձ ասացին, որ փորձել են նման վիրահատություններ անել, սակայն առանց հաջողության, եւ հիվանդի վիճակը նույնիսկ ավելի է վատացել: Բացի այդ, բժշկի հետ զրույցից ես հասկացա, որ խնդիրը միայն դա չէ:

- Բժիշկ, ինչո՞ւ ես գրեթե չեմ զգում ոտքերս:

- Դժվար է բացատրելը: Քանի որ ողնուղեղից մինչեւ ոտքերը ազդակներ չեն հասնում: Բայց հիմնական խնդիրն այն է, որ վնասվել է Ձեր ողնաշարը:

- Բժիշկ, ես երբեւէ կկարողանամ քայլել:

- Հնարավոր է:

Ես երկար եմ մտորել այն ժամանակ այդ «հնարավոր է»-ի վրա: Քնելիս՝ երազում կամ վթարն էի տեսնում, ավելի ճիշտ՝ դրվագներ վթարից, որոնք դաջվել էին հիշողությանս մեջ, կամ մանկության տարիներից պատկերներ: Երազներս ուրախություն չէին բերում ինձ, ավաղ: Արթնանում էի արցունքների մեջ: Չէի ուզում ապրել: Բժիշկը բարձրացնում էր ձեռքս ու ասում՝ բռնիր: Իսկ երբ բաց էր թողնում, ձեռքս պարզապես «փլվում էր» դեմքիս՝ թողնելով կապտուկ: Բժիշկը կնճռոտվում էր, բայց ոչինչ չէր ասում. լռում էր: Ես սկսեցի «հանթելներ» բարձրացնել, որպեսզի սովորեի ինչ-որ կերպ «ընկերություն անել» ձեռքերիս հետ: Այդ մարզումները դյուրությամբ չէին տրվում ինձ: Սակայն աստիճանաբար կարողացա դրանք բռնել: Զուգահեռաբար՝ այդ մարզումներն ինձ սովորեցրին ամուր բռնել գդալն ու ինքնուրույն ուտել: Դրանից առաջ ինձ կերակրում էր մայրս կամ բուժքույրը:

Ինձ տեսության էին գալիս ընկերներս: Ու ես ինձ մի տեսակ մեղավոր էի զգում: Նրանք նայում էին ինձ, փորձում ուրախացնել, սակայն նրանց աչքերում ես կարեկցանք ու նույնիսկ խղճահարություն էի կարդում: Չէի հուսահատվում: Խոսում էի նրանց հետ: Անընդհատ ասում էի, որ շուտով ոտքի կկանգնեմ, եւ նույնիսկ միասին Ճապոնական ծովի կղզիներ ճամփորդության պլաններ էի կազմում: Նրանք լսում էին ինձ, գլխով հավանություն տալիս ու հետո գնում իրենց գործերին: Իսկ ես մնում էի միայնակ իմ ցավի հետ, իմ ծանր մտքերի եւ հիվանդասենյակի՝ անտանելի դարձած սպիտակության հետ:

Շարունակելի

ԽՈԶԱԼԻՐ՝ ՊԱՐԶ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ

- Պողոս, այ Պողոս, բա չիմացար… Հիշո՞ւմ ես, որ ասում էին՝ Ադրբեջանով ցորեն ենք ստանալու…

- Հա:

- Ստացել ենք:

- Ցամա՜մ… Մալադեց Նիկոլ:

- Հա, Պողոս ջան… Բա որ իմանաս ինչ ցորեն աաաա…

- Ցորենը ցորեն չի՞:

- Ցորենը ցորեն ա, Պողոս ջան, բայց էդ ցորենի կեսը իշխանությունների համար է, կեսը՝ պողոսների: Նիկոլն էլ կարգադրել է՝ չլինեմ, չիմանամ, որ իշխանությունները պողոսի ցորենից գողանան, ուտեն:

- Ցամա՜մ… Մալադեց Նիկոլ:

- Ասիր ու թողի՞ր, մալադեց, բա ինչ: Նույնիսկ կարգադրել է՝ ցորենը տարբեր ալրաղացներում աղան, որ իշխանական ցորենը պողոսների ցորենի հետ չխառնվի:

Պողոսն ընկավ մտքերի մեջ: Ձեռքը տարավ ծոծրակին… Ես հասկացա, որ Պողոսի գլխում ինչ-որ բան շարժվեց: Չէի սխալվում:

- Իսկ չէի՞ն կարող ցորենն այնքան բերել, որ բոլորին հերիքեր… Էդ էլ հո երկու էշի գարի չէ՞, որ չեն կարողանում իրարից ջոկել ու Նիկոլին էլ էդքան նեղություն են տալիս:

- Չէ, Պողոս ջան, քանակի խնդիր չկա այստեղ, ցորենը վագոններով բարձած գալիս է, վերջը չի երեւում: Ուղղակի ամեն «սաստավի» 2 վագոնը իշխանության ցորենն է, 10-12 վագոնը՝ ժողովրդինը, այսինքն՝ իմը, քոնը, ձեր հարեւան Արտաշինը… Նիկոլը կարգադրել է, որ դեռ Հայաստան չմտած՝ ցորենը ջոկ-ջոկ անեն:

Պողոսի հայացքից զգացի, որ նա ոչ մի կերպ չի ընկալում հայտնածս նորությունը: Անընդհատ բարձրանում էր ոտքի թաթերի վրա, իջնում, բարձրանում, իջնում: Մեկ էլ՝ խոսեց.

- Դու ինչ-որ բան այնպես չես ասում…

- Ի՞նչը…

- Այ մարդ, Հայաստան չհասած էդքան պարապ մարդ կա՞, որ մեր իշխանության ու ժողովրդի ցորենն իրարից ջոկի:

- Այ Պողոս ջան, հո հատիկ-հատիկ չե՞ն ջոկում: Իշխանական ցորենն ուրիշ արտից է, մերը՝ ուրիշ: Արդեն ջոկած է, հասկանո՞ւմ ես, ջոկած լցնում են տարբեր վագոնների մեջ, վագոնի վրա էլ, որ Հայաստանում չխառնեն, գրում են. սա՝ «Նիկոլին», սա՝ «պողոսներին»:

- Ասում ես՝ արտերն են տարբե՞ր…

- Հա, վագոններն էլ… Ցորենն էլ տարբեր ալրաղացներում են աղալու, մի մասը՝ Սիլաչի, մի մասը՝ Բաղրամյան:

Պողոսը գլխով արեց.

- Հա, այդքանը հասկացա, իսկ ինչպե՞ս են հացի փռում ալյուրն իրարից ջոկելու:

- Նիկոլն այդ մասին էլ է մտածել, Պողոս ջան: Փռերն էլ են տարբեր լինելու՝ էլիտար եւ սովորական: Իշխանականների հացի խանութները ջոկ են լինելու, իմը, քոնը, ձեր հարեւան Արտաշինը՝ ջոկ: Նրանց հացը թանկ կլինի, մերը՝ էժան:

- Չհասկացա… Իշխանականները էժան հացի համար կլցվեն մեր խանութները, էդքան խելք չունե՞ն:

- Չեն լցվի, Պողոս ջան, հանգիստ մնա, Նիկոլը գիտի՝ ինչ է արել: Ասի, չէ՞, արտերը տարբեր են: Նրանցը վերի արտի ցորեն է, մերը՝ ներքի… վագոնները տարբեր են, ալրաղացները՝ տարբեր, ալյուրները՝ տարբեր, փռերը՝ տարբեր, խանութները՝ տարբեր… Պողոս, հասկացիր, վերջապես, նրանցը ալյուր է, մերը՝ «խոզալիր»:

- Խոզալիրն ի՞նչ ա…

- Չգիտեմ: Գնա, Նիկոլին հարցրու: Ինքը դրա մեծ մասնագետն է…

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԲԱՔՎՈՒՄ ՆԵՂՎԱԾ՝ «ՆԵՐԿԱ-ԲԱՑԱԿԱ» ԵՆ ԱՆՈՒՄ, ԹԵ ՈՎ ՉՄԱՍՆԱԿՑԵՑ ԶՈՐԱՀԱՆԴԵՍԻՆ

Ադրբեջանում էյֆորիկ վիճակ է, եթե չասենք՝ համազգային «պսիխոզ»՝ կապված նոյեմբերի 8-ին Բաքվում կայացած զորահանդեսի հետ, որը նվիրված էր Արցախյան 44-օրյա պատերազմի 5-ամյակին: Ռազմականացված բռնապետական երկրի համար սա բնական է, քանզի, այսպես կոչված, «փառահեղ հաղթանակի հոբելյանական զորահանդեսը» ոչ միայն նոր սպառազինությունների ցուցադրման հերթական պատեհությունն էր, այլեւ Հայաստանի նկատմամբ իրական ու շարունակական «տարածքային պահանջների, սպառնալիքների» վերահնչեցման շոու: Ադրբեջանական իշխանամերձ շրջանակներն ու մասմեդիան անթաքույց հայտարարում են. «Ռազմական շքերթն ամենից առաջ տեղեկատվություն է տրամադրում երկրի զինված ուժերի վիճակի եւ զարգացման միտումների մասին: Այն նաեւ մեծ դիվանագիտական միջոցառում է: Արտասահմանյան հյուրերի եւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների ներկայությունը տրիբունաներում նույնպես շատ բան է ասում»:

Ինչպես հայտնի է, Բաքվի զորահանդեսը գրավել է զգալի թվով օտարերկրյա հյուրերի. պատվավոր հյուրի կարգավիճակում ներկա էին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, Պակիստանի վարչապետ Մուհամադ Շահբազ Շարիֆը, նաեւ՝ Սլովակիայի փոխվարչապետ եւ պաշտպանության նախարար Ռոբերտ Կալինյակի գլխավորած պատվիրակությունը, Սերբիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ Միլան Մոյսիլովիչը, Ղազախստանի պաշտպանության նախարար Դաուրեն Կոսանովը, Սաուդյան Արաբիայի եւ Ուզբեկստանի պաշտպանության փոխնախարարները, Ղրղզստանի պաշտպանության նախարարը, Ադրբեջանում հավատարմագրված դիվանագետներ: Մի կողմ թողնենք այն, որ այս խմբում եղել են նաեւ Հայաստանի հետ ռազմական եւ դաշնակցական հարաբերությունների մեջ գտնվող որոշ, մասնավորապես ասիական երկրների բարձրաստիճան զինվորականներ (ՀԱՊԿ, ԵԱՏՄ, ԱՊՀ պետությունների ներկայացուցիչներ), թեպետ փաստն ինքնին զարմանալի չէ՝ այդ երկրներն առաջիններից էին, որ շտապեցին «Ադրբեջանին շնորհավորել Ղարաբաղում տարած պատմական հաղթանակի» կապակցությամբ: Առավել տարակուսելի է, որ Ադրբեջանում սկսել են «ներկա-բացակա» անել, թե ովքեր եւ ինչու չայցելեցին Բաքու՝ զորահանդեսին մասնակցելու:

Իշխանամերձ քարոզչակայք Minval Politika-ն պարզել է, որ շքերթի ժամանակ տրիբունաներում եղել է 75 երկրի ներկայացուցիչ. «Դրանցից 37-ը, այդ թվում՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Չեխիան, Հունգարիան, Մոլդովան, Չինաստանը, Իսրայելը եւ Իրանը, ներկայացված էին դեսպանների մակարդակով: Միացյալ Թագավորությունը, Չիլին, Աֆղանստանը, Իտալիան եւ մի քանի այլ երկրներ ներկայացված էին գործերի ժամանակավոր հավատարմատարներով: ԱՄՆ-ն, Կորեան, Լեհաստանը եւ մի քանի այլ երկրներ ուղարկել են իրենց ռազմական կցորդներին (շատ երկրներ ներկայացված էին եւ դեսպաններով, եւ ռազմական կցորդներով): Բայց... որոշ երկրների ներկայացուցիչներ, չնայած հրավերներին, այնուամենայնիվ, չհայտնվեցին տրիբունաներում...»: Նշում է նաեւ, որ Գերմանիայի, Լատվիայի եւ Շվեյցարիայի դեսպաններն այդ օրն Ադրբեջանում չեն եղել: Եխ ներկայացուցիչը նախապես պլանավորված հանդիպում ուներ: Հունաստանի դեսպանը պատրաստվում էր լքել երկիրը, իսկ Պորտուգալիայի դեսպանի առաքելությունն ավարտվել էր. «Սակայն որոշ դիվանագետներ անտեսեցին հրավերը: Օրինակ, Ֆրանսիայի դեսպանը, ԵՄ ներկայացուցիչը, Բելգիայի, Լիտվայի եւ Ավստրիայի դեսպանները, ԱՀԿ-ի եւ ՄԱԿ-ի ներկայացուցիչները, Նիդերլանդների դեսպանը»:

Ադրբեջանում ոչ միայն սեփական նեղացածությունն են ի ցույց դրել, այլեւ նույնիսկ սպառնալիքներ հնչեցնել: «Հատուկ պետք է հիշատակել որոշ եվրոպացի դիվանագետների, հաշվի առնելով նրանց նախկին դիրքորոշումը: Մենք լավ հիշում ենք եվրոպական առաջնորդների «գրկախառնությունները» Հայաստանի հետ Շառլ Միշելի եւ Ժոզեպ Բորելի օրոք: Ինչպես նաեւ՝ խոսակցությունները Հայաստանի ռազմական օգնության կարիքի մասին: Մենք հիշում ենք Գրանադայում կայացած հանդիպումը, որտեղ եվրոպացի առաջնորդները թույլ տվեցին իրենց քննարկել Ադրբեջանին վերաբերող հարցեր՝ առանց Ադրբեջանի մասնակցության: Ճիշտ է, ԵՄ ղեկավարությունը եւ, հուսանք, քաղաքականությունը նույնպես փոխվեցին: Բայց եթե հիմա ԵՄ ներկայացուցիչն անտեսում է Ղարաբաղում հաղթանակի 5-րդ տարեդարձի շքերթի հրավերը եւ նույնիսկ չի բացատրում պատճառները, արդյո՞ք ԵՄ քաղաքականությունն իսկապես այդքան շատ է փոխվել: Արդյո՞ք նրանք դեռ նախընտրում են «կանգնել Հայաստանի կողքին», չնայած պատերազմն արդեն ավարտվել է»,- գրում է «Մինվալի» հոդվածագիրը՝ ներկայացնելով վարչախմբի պաշտոնական տեսակետը: «Եվ եթե Նիդերլանդների դեսպանը ոչ միայն անտեսում է հրավերը, այլեւ չի զգում դրա դրդապատճառները բացատրելու անհրաժեշտությունը, սա պարզապես անձնական սխա՞լ է կամ սա քաղաքականությո՞ւն է: Եվ վերջապես՝ նույն Ֆրանսիան, որի հետ սառը հարաբերությունները նոր-նոր են սկսում հալչել: Բաքուն շատ լավ է հիշում 44-օրյա Հայրենական պատերազմի ժամանակ Փարիզի հայտարարությունները, թե ինչպես Ֆրանսիան սպառնաց ճանաչել «ԼՂ անկախությունը» եւ, ընդհանուր առմամբ, «թույլ չտալ» Ադրբեջանին՝ լուծել հակամարտությունը ռազմական ճանապարհով: Արդյունքում, Ադրբեջանի եւ Ֆրանսիայի միջեւ երկկողմ հարաբերությունները, ըստ էության, սառեցվեցին: Հիմա Ֆրանսիան անտեսում է Ադրբեջանում հաղթանակի օրվա շքերթի հրավերը՝ խորհրդանշական է»:

«Եվ հենց սա է այն դիվանագիտությունը, որից Բաքուն կանի ամենալուրջ եզրակացությունները: Այո, պատերազմն ավարտվել է, հակամարտության էջը շրջվել է, բայց մենք ոչինչ չենք մոռացել: Ո՛չ մեր թշնամիների ճիչերը, ո՛չ մեր բարեկամներ ձեւացողների լռությունը...»,- եզրափակում է հեղինակը: Արժե, որ այս հրապարակումներն ուշադիր կարդան Հայաստանում ու խորհեն, թե ում հետ են խաղաղություն կառուցում, եւ ինչ անվտանգային սպառնալիքների կարող ենք բախվել մենք, եթե չվերանայենք մեր ներքին ու արտաքին քաղաքական առաջնահերթությունները:

Արա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 12.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՐԱՆԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԻՋԵՎ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼԻՈՎԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է

The New York Times պարբերականն իր հրապարակումներից մեկում անդրադարձել է այն հարցին, թե արդյոք հնարավո՞ր է նոր պատերազմ Իրանի եւ Իսրայելի միջեւ: Հեղինակը կարծում է, որ եթե չկան բանակցություններ, վերահսկողություն, նաեւ հստակություն՝ այն հարցի հետ կապված, թե պահպանվո՞ւմ են արդյոք Իրանի միջուկային նյութերը, շատերի մոտ մտահոգություն կա, որ Իսրայելի ու Իսլամական Հանրապետության միջեւ ռազմական նոր բախումը լիովին հավանական է, եթե չասենք՝ անխուսափելի: Հոդվածում նշվում է, որ հարցը թերեւս միայն այն է, թե կոնկրետ երբ կսկսվի այդ բախումը: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը պնդեց, որ ԱՄՆ հարվածները ոչնչացրել են իրանական ուրանի հարստացման ծրագիրը: Սակայն ռեգիոնալ պաշտոնյաներն ու վերլուծաբաններն ամառվանից հետո այս ամիսների ընթացքում ավելի ու ավելի են համոզվում, որ Թրամփի հայտարարությունը լիովին չի համապատասխանում իրականությանը: Հետեւաբար նաեւ՝ նոր ռազմական բախման հետ կապված մտահոգությունը նրանց մոտ շարունակում է աճել:

2015 թվականին կնքված Միջուկային գործարքի համաձայնագրի գործողության ժամկետը, որը սահմանափակում էր Իրանի կողմից ուրանի հարստացման աշխատանքները, լրացել է անցյալ ամիս: Իրանի դեմ վերականգնվել են կոշտ սանկցիաները: Միջուկային ծրագրի հետ կապված բանակցությունները, ըստ ամենայնի, մտել են փակուղի՝ գոնե այս պահի դրությամբ: Իրանում ներկայում եղած բարձր հարստացվածության ուրանի քանակը բավարար է՝ 11 միավոր միջուկային ռումբ ստեղծելու համար: Դրանք կամ գտնվում են միջուկային ռմբահարված օբյեկտների փլատակների տակ, կամ անվտանգ վայր են փոխադրվել, ինչպես հայտարարում են Իսրայելի պաշտոնյաները: Թեհրանն էլ, ըստ ամենայնի, շարունակում է ուրանի հարստացման նոր օբյեկտ կառուցել, որը հայտնի է Փիքակս-Մաունթին անունով, եւ հրաժարվել է միջազգային տեսուչներին թույլ տալ՝ մուտք գործելու այդ կամ որեւէ այլ միջուկային օբյեկտ իր տարածքում: Արդյունքում՝ շատ վտանգավոր պատային իրավիճակ է ստեղծվել, երբ չկան բանակցություններ, որոշակիություն եւ անկախ հսկողություն: Շատերը Պարսից ծոցի երկրներում կարծում են, որ այժմյան իրավիճակն ավելի հավանական է դարձնում այն, որ Իսրայելը կարող է հարվածել Իրանին: Թեհրանն էլ կարող է պատասխանել Իսրայելին՝ նախորդ անգամվա համեմատ ավելի կատաղի կերպով: Հատկապես, որ Իրանից որոշակիորեն հասկացնում են, որ իրենց հրթիռային գործարաններն աշխատում են շուրջօրյա ռեժիմով, եւ հույս ունեն, թե Իսրայելի հետ պատերազմում կկարողանան միանգամից երկու հազար հրթիռ արձակել՝ իսրայելական պաշտպանությունը կործանելու համար: 12-օրյա պատերազմում նրանք 500 հրթիռ էին կարողանում արձակել:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am